

Է. Ն. ՓԻՐՈՒՄՈՎ

(ՀԽՍՀ ՏՐՈՊԻԿԱԿԱՆ ԽԵԱՏԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ)

ՄԱԼԱՐԻԱՆ
ՅԵՎ ՊԱՅՄԱՆԱԾ ԵՐԱ ԴԵՄ
ԿՈԼԻՇՈԶՈՒՄ

31 JAN 2018

Խ. Ն.ՓԻՐՈՒՄՈՎ
(ՀԽՍՀ ՏՅԱՊԻԿԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ)

ՄԱԼԱՐԴԱՆ
ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ
ԿՈԼԻՌՈԶՈՒՄ

Ձ
Պ
Ա


ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1938

ՄԱԼԱՐԻԱՅԻ ՏԱՐՍԾՄԱՆ ՊԱՏՃԱՌԵՐԸ

Շատ քիչ մարդ կարելի յե գտնել մեղ մոռ, վոր լսած չկհնի մալարիայի մասին: Իսկ տասնյակ և հարյուր հազարավոր մարդիկ հենց իրենք անցյալում ունեցել են այդ հիվանդությունը կամ դեռ այսոր ել տառապում են նրանով: Բայց չնայած դրան, շատ շատերը դեռ ճիշտ տեղյակ չեն մալարիայի տարածման իսկական պատճառներին: Նույնիսկ մալարիայով ուժեղ վարակված վայրերում հաճախ կարելի յե պատահել մարդկանց, վորոնք կարծում են, թե մալարիան առաջանում ե ծիրան, վարունգ, սեխ և այլ մրգեր ուտելուց:

Մինչդեռ գիտությունը վաղուց ե պարզել և ապացուցել, վոր մալարիան վարակիչ նիվանդուրյուն ե: Մակայն մալարիայի վարակն անցնում ե հիվանդից առողջին վոչ թե անմիջականորեն, ինչպես դա տեղի յե ունենում ուրիշ շատ վարակ չ հիվանդությունների ժամանակ (խոլերա, գրիպ, քութեշ և այլն), այլ միջնորդ միջատի մոծակի միջոցով:

Մալարիայի հարուցիչը, այսինքն այն մանրեն, վորն առաջացնում ե այդ հիվանդությունը պլազմոդիում և կոչվում: Նա գտնվում ե հիվանդ մարդու արյան կարմիր գնդիկներում և սնվում սրանց հաշվին:



Նկ. 1.

Հենց նույն կարմիր գնդիկներում ել մալարիայի պլազմոզիումը բազմանում ե, յուրաքանչյուրը բաժանվելով 8-ից մինչև 32 մասի: Այդ ժամանակ կարմիր գնդիկը քայլայվում ե, նոր դոյլացած լերիտասարդ պարագիտները դուրս են գալիս նրանից



11-28459

և ամեն մեկը նորից մտնում ե մի նոր առողջ կարմիր գնդիկի մեջ ու նորից սկսում աճել ու բազմանալ:

Հիվանդ մարդու դողն սկսվում ե հենց այն ժամանակ, յերբ նոր առաջացած յերիտասարդ պարագիտները դուրս են գալիս քայլած կարմիր գնդիկներից:

Մեզ լավ հայտնի յեն մալարիայի պարագիտների յերեք տեսակներ: Մի տեսակի համար հարկավոր ե 72 ժամ, այսինքն յերեք որ, վորպեսզի թարմ կարմիր գնդիկի մեջ անցնելուց հետո նա ավարտի յուր զարգացման ցիկլը (շրջանը) և քայլայի նրան: Այդ պարագիտը առաջ ե բերում այսպես կոչված հառորդ մալարիա, այսինքն նրանով տառապող մարդը դողացնում ե ամեն յերեք որ անցնելուց հետո, չորրորդ որվա սկզբին:

Մյուս յերկու տեսակներն իրենց զարգացման ցիկլը կարմիր գնդիկներում ավարտում են 48 ժամվա ընթացքում: Բայց նրանցից մի տեսակի համար, վորը յեռորդ մալարիայի պարագիտ ե կոչվում, ժամանակամիջացը կանոնավոր պահպանվում ե բոլոր պարագիտների նկատմամբ և այդ պատճառով ել հիվանդը դողացնում ե 48 ժամը, այսինքն յերկու որը մեկ անգամ, յերրորդ որվա սկզբին: Իսկ յերրորդ տեսակի՝ տրավիկալան մալարիայի պարագիտները կանոնավոր չեն կատարում իրենց զարգացումը և այդ պատճառով ել տեսդի կրկնողությունը անկանոն ե լինում, յերրեմն առանձին նոպաները լավ արտահայտված չեն լինում, հիվանդը միշտ տաքություն ե ունենում, այդ պատճառով ել տրոպիկական մալարիան, վորը մալարիայի ամենադժվար տեսակն ե համարվում, հաճախ ընդունվում ե այլ հիվանդության, տիֆի տեղ որինակ:

Ուրեմն պարզ ե, վոր մալարիայի պարագիտների՝ պլազմոցիտների հիմնական աղբյուրը հիվանդ մարդու արյունն ե: Յեթե վերցնենք այդ արյունից նույնիսկ շատ քիչ քանակությամբ և սրսկենք առողջ մարդուն, նա կվարակվի մալարիայով և մի քանի որից հետո կակափ դողացնել:

Բայց ընական պայմաններում միայն չափազանց հազվագյուտ դեպքում (որինակ, ովերացիայի ժամանակ) հիվանդ մարդու արյունը կարող է անմիջապես շփվել առողջի արյան հետ, իսկ սովորաբար այդ չել լինում է այդ պատճառով ել մալարիան չի անցնում հիվանդից առողջին ամիջապես: Այլ կատարում ե վարութեականի միջոցով, վորոնք մալարիայի

փոխանցողներն են, միջնորդները հիվանդի և առողջի միջև: Ծըծելով հիվանդի արյունը, նրանք իրենց ստամոքսի մեջ են առնում նաև մալարիայի պարագիտներին: Վերջինները վորոշ փոփախությունների յենթարկվելուց ու խիստ բազմանալուց հետո անցնում են մոծակի թքագեղձերը: Յերբ այդպիսի մոծակը խայթում ե առողջ մարդուն, նա յուր թքի հետ միասին մացնում է նրա մարմնի մեջ այդ պարագիտներին և այդպիսով վարակում նրան: Մեկ կամ մի քանի շաբթից հետո վարակված մարդը ակսում ե դողացնել:

Բացի մոծակից, արյուն ծծող ուրիշ վոչ մի միջատ (փայտոջիլ, լու, փղիլ, տիզ, ճանձ և այլն) մալարիա փոխանցել չի կարող: Նրանց ստամոքսում մալարիայի պարագիտները վոչնչանում են:

Մոծակներից և վոչ բոլոր տեսակներն են ընդունակ մալարիա տարածել: Այդ ընդունակությունն ունեն միայն անօթելիս կոչվող մոծակները:

Տարբերել մալարիա տարածող անոփելեներին հասարակ, անվտանգ մոծակներից դժվար չե:

Բայց նախ քան այդ տարբերության մասին խոսելը անհրաժեշտ ե համառոտ ծանոթանալ մոծակների ու նրանց զարգացման ձևերին:

ՄՈՇԱԿԻ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մոծակը յերկթեվանի և գիշերային միջատ ե: Յերեկները նա թագնվում է վորեւ մութ անկյունում, իսկ արեւը մայր մըտնելուց հետո դուրս ե գալիս այդտեղից սնվելու և այլ նպատակների համար:

Մոծակների հիմնական սնունդը բույսերի հյութն ե: Բայց վորպեսզի եղ մոծակը կարողանա նոր սերունդ տալ, բազմանալ անհրաժեշտ ե, վոր նա ծծի նաև արյուն — մարդու կամ կինդանիների: Արու մոծակները արյուն չեն ծծում (հետեւրար նրանք չեն ել կարող մալարիա տարածել): Դրսում մոծակներին կարելի յետնել միայն տաք ամիսներին, իսկ ցուրտ յեղանակին նրանք թափնվում են մի հարմար տեղ և հաճախ ընկնում ձմռան քնի մեջ: Նրանք բազմանում են միայն տաք ամիսներին:


Մոծակը բազմանում է բավականին բարդ ձևով: Եղ մոծակը բեղմնավորվելուց վորոշ ժամանակ հետո ձու յե դնում ջրի յե-

բեսին — ամեն անգամ՝ 100-ից մինչև 200 հատ և ավելի: Ամեն 2-3 որից հետո ձկնից դուրս են զափս շատ փոքրիկ թրթուրներ, Նրանք ապրում են ջրի մեջ: Մասկելով ջրի մեջ յեղած ավելի փոքր բույսերով ու կենդանիներով, նրանք մեծանում են և 3-4 որ հետո փոխելով իրենց մաշկը, դառնում են յերկրորդ շրջանի կամ հասակի թրթուրներ:

Յերկրորդ հասակի թրթուրները նույն ձևով մաշկափոխությունից հետո դառնում են յերրորդ հասակի թրթուրներ, սրանք իրենց հերթին՝ չորրորդ հասակի: Չորրորդ հասակի թրթուրն արդեն բավականին մեծ է: 2-4 որից հետո նա դառնում է հարսնյակ:

Հարսնյակը բերան չունի, նա դրսից չի սնվում: 2-4 որ հետո հարսնյակից դուրս եւ գալիս թևավոր մոծակը (տես նկ. 2): Նոր դրած ձվից հասունացած թևավոր մոծակ ստանալու համար պահանջվում է շոգ ամիսներին 14-15 օր, իսկ յեթե յեղանակը ցուրտ եւ ավելի յերկար:

ՄՈՅԱԿԸ ԴՈՒՐՍ ԵԳԱԼԻՄ ԴԱՐՄՆՅԱԿԻԿ



Նկ. 2.

Մոծակների բազմացումը տեղի յեւ ունենում միայն տաք ամիսներին: Մեզ մոտ նոյեմբերից մինչև մարտ ամիսը մոծակները չեն բազմանում: Այդ ժամանակ դժվար եւ դուրսը մոծակ

գոնել: Զմեռը մոծակներն անց են կացնում գոմերում, ընակարաններում, նկուղներում և այլ տեղերում: Յեթի նրանց թագընը ված տեղը ցուրտ է, նրանք ընկնում են ջրի մեջ և արթնանում միայն դարձնան տաք որերն սկսելուց:

Կան նաև այնպիսի մոծակներ, վորոնք ձմեռն անց են կացնում թրթուրային վիճակում: Այդ թրթուրները ընդունակ են լավ դիմանալ ցրտին, նրանք կարող են ապրել սառուցով պատաժ ջրի մեջ: Այդ տեսակի մոծակներից թևավորված մոծակ գոնել ձմռանը հնարավոր չէ, վարովինեակ աշնան ցրտերն սկսվում են:

ՄԱԼԱՐԻԱ. ՏԱՐԱԾՈՂ ՅԵՎ ՀԱՍՍՐԱԿ ՄՈԾԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մալարիա տարածող (անոֆելես) մոծակներն իրենց գացման բժնոր աջաններում, սկսած ձվերից և մինչև թևավոր դառնալը, տարրերվում են հասարակ մոծակներից:

Անոֆելեսի ձվերը տեղավորվում են ջրի յերեսին պառկած գրությամբ, մեկը մյուսից անջատ կամ թե կպչում են իրար ծայրերով, կողքերով: Հասարակ մոծակի ձվերը միշտ սերտորեն կպած են լինում իրար ամբողջ յերկարությամբ և կազմում են մի փոքրիկ նավակ: Յեթե խոշորացույցով նայենք այդ նավակին, հեշտությամբ կարող ենք տեսնել, վոր նա բաղկացած եւ մեծ քանակությամբ իրար կպած ձվերից, վորոնցից ամեն մեկը դիպչում է ջրի մակերեսին միայն յուր ծայրով (նկ. 3):


Թրթուրներին ավելի հեշտ եւ տարրերել: Հասարակ մոծակի թրթուրի պոչային մասում կա մի յելուստ, վորը շնչառական կոնուս և կոչվում: Դա մի խողովակ է, վորի միջոցով շնչում եւ թրթուրը:

Անոֆելեսի թրթուրն այդպիսով կոնուս չունի, թեև նա և դրսի ողով եւ շնչում:

Յեթե թրթուրները կենդանի յեն և դանիխում են ջրի մեջ, նրանց կարելի յեւ տարրերել նաև իրենց ունեցած դիրքով, անոփելեսի թրթուրը ջրի յերեսին ընդունում է հորիզոնական դիրք, պառկում եւ ուղիղ, իսկ հասարակ մոծակի թրթուրը ջրի յերեսին է կպցնում միայն յուր պոչային մասը, իսկ զլուիր և մարմինը մնում են թեք կախված ջրի մեջ (նկ. 3):


Հարսնյակներին տարրերելը քիչ դժվար է: Տարրերության ավելի ցայտուն նշանն այն է, վոր անոփելեսի հարսնյակի շնչառական մասը մարմինը

կան խողովակները, վորոնք անհավորված են մարմնի վերևի մասում, ունեն ձևգարի ձև, մինչդեռ հասարակ մոծակները՝ ամբողջ յերկարությամբ միևնույն լայնությունն ունեն:



նկ. 3.

Թևավոր մոծակներին տարբերում են մի շարք նշաններով:
Նախ հենց կենդանի մոծակի նստելու ձևը հնարավորություն
եւ տալիս էնշտությամբ ճանաչելու անոփելեսին. նստելուց նա
յուր պոչային ծայրը բարձր և պահում, այնպես, վոր յեթե նրա
մարմնի ուղղությամբ մի ուղիղ գիծ քաշենք, նա սուր անկյուն
գկազմի այն մակերեսի հետ, վորի վրա նստած և մոծակը (նկ. 4):



նկ. 4.

Իսկ հասարակ մոծակը, նստած ժամանակ պոչային ծայրը ցածր
եւ պահում. նրա թե գլուխը և թե պոչային ծայրը համարյա կամ
եւ նստած տեղին, իսկ մարմնը ավելի բարձր եւ:


Մեծ տարբերություն կա նաև նրանց մարմնի, մասնավորա-
պես զլիսի կազմության մեջ: Մոծակի զլիսին, նրա առաջային
մասում ամբացած են հետեւյալ մասերը՝ յելուստները, խայրիչը՝
վորով նա ծակում եւ մաշկը և ծծում արյունը կամ բույսերի հյութը,
մի զույգ ռաւափակներ և մի զույգ բեխիկներ: Այդ մասերը, գոյու-
թյուն ունեն թե արու և թե եղ մոծակների մատ, բայց նրանց
ձևը նույնը չե:

Արու մոծակն յուր զլիսի յելուստներով տարբերվում ե
եղից նրանով, վոր նրա բեխիւրը լավ են զարգացած, մեծ են ու
զինված մեծ քանակությամբ բավական յերկար մազիկներով:
Իսկ եղի բեխիկները բարակ են և նրանց վրա յեղած մազիկները
շատ փոքր են, հասարակ աչքով հազիվ նկատելի:

Բայց անոփելեսի և հասարակ մոծակի բեխիկներն ել իրար
նման չեն, անոփելեսի բեխիկների ծայրերը հաստացած են, կո-

պալաձեւ և իրենց յերկարությամբ հավասար խալթիչին: Հասարակ մոծակի բեկիները սովորաբար քիչ յերկար են խայթիչից և ունեն բարակ ծայր: Այդ տարբերությունը դժվար չեւ նկատել հնաց հասարակ աչքով:

Յեթե մոծակը իրական սեռի յեւ, նրա անոփեկես լինելը կամ չինելը վորոշվում է շոշափուկների յերկարության հիման վրա: Ասոփելսի շոշափուկները յերկար են և հավասար խայթիչին, իսկ հասարակ մոծակի շոշափուկները կարճ են, նրանք կպած են խայթիչին արմատի մոտ և յերկարությամբ հավասար են խայթիչի: Մեկ չորրորդ կամ մեկ յերրորդ մասին (նկ. 5):



նկ. 5.

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ ՄԱԼԱՐԻԱՅԻ ՑԱՐԾՎԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Յուր արյան մեջ մալարիայի պարագիտներ պարունակում մարդու արյունը ծծելուց հետո անոփեկես մոծակն ամիջապես վարակիչ չի դառնում: Առողջ մարդուն վարակելու ընդունակությունը մոծակը ծեռք և բերում միայն վորոշ ժամանակից հետո:

Ծծած արյան հետ միասին մոծակի ստամոքսն անցած պարագիտները սովորաբար յերկու սեռի յեն վնաս: Այստեղ արական պլազմոֆիտները բեղմնավորում են իրականներին, վորից հետո

վերջիններն ակտիվ կերպով մտնում են մոծակի ստամոքսի պատի մեջ ու ամբանում նրա արտաքին շերտի տակ:

Պարագիտը այստեղ մնում է 7-ից մինչև 20 և ավելի որպես ժամանակամիջոցում նա աճում է ու բազմանում, այսպես վոր նրանից ստացվում է մի բշտիկ, վորը լեփ-լեցուն է մալարիայի յերիտասարդ պարագիտներով, վորոնք սպորտիտներ են կոչվում:

Լրիվ հասունանալով բշտիկը պատռվում է և նրա մեջ յեղած սպորոգիտները թափվում են մոծակի վորովայնի խոռոչը իսկ այստեղից մեծ քանակությամբ անցնում են նրա թքաղեղձերի մեջ:

Հայտնի յերորդին, վոր մոծակի խայթած տեղը քոր և գալիս Սրա պատճառն այն է, վոր մոծակը խայթելուց մի քիչ թուք և մացնում խայթած տեղը: Այդ բանը մոծակի համար անհրաժեշտ է յերկու տեսակետից՝ նաև, այդ հեղուկը՝ թուքը չի թողնում վոր արյունը մակարդակի և այդպիսով հնարավոր և դարձնում մոծակի համար ծծել արյունը: Յեթե մոծակի թուքը չիներ, արյունը կմակարդակեր խայթիչի անցքում, իսկ դրա հետեւանքով մոծակը կվոչնչանար: Թքի յերկրորդ հատկությունը կայանում է նրանում, վոր նա զրգում է մաշկը և դարձնում է նրան արյունով հարուստ, այդ պայմաններում արյան ծծելը մոծակի համար ավելի յեւ հեշտանում: Թքի հենց այդ գրգոր հատկությունն է, վոր պատճառ և դառնում խայթած տեղի քոր գալուն, փոքրիկ ուռուցք առաջանալուն, կարմրելուն:

Մենք տեսանք, վոր վարակված մոծակի թքաղեղձերում մեծ քանակությամբ մալարիայի պարագիտներ են հավաքվում: Այստեղից նրանք ընկնում են թքի մեջ և յերբ այդպիսի մոծակը խայթում է մարդուն, նա յուր թքի հետ միասին մտցնում է նրա արյան մեջ նաև այդ պարագիտներին և վարակում նրան:

Վարակված մոծակը կարող է խայթել նաև վորեւ կենդանու, բայց դրանից վերջինը չի տուժի, չի վարակվի, վորովինու մալարիայով հիվանդանում է միայն մարդը: Կենդանիներն եւ ունեն հիվանդություն, վորը նման է մալարիային, բայց նա առաջանում է այլ պարագիտաներից, վորոնք իրենց հերթին անվտանգ են մարդու համար:

Այս և մալարիայի տարածման միակ ճանապարհը:

Բացառիկ գեղքերում մալարիայով կարելի յէ վարակվել մի այլ ձանապարհով: Յեթե հղի կինը տառապում և մալարիայով, նրա արյան մեջ գտնվող պարագիտները վորոշ պայմաններում կարող են անցնել դեռ արդանորում գտնվող յերեխայի արյան մեջ և վարակել նրան: Այդ գեղքում յերեխան ծնվում և արդեն մալարիայով վարակված:

Այսպիսով մենք տեսանք, վոր մալարիայի տարածվելու համար անհրաժեշտ ե, վոր տվյալ վայրում գոյություն ունենան՝ ա. արյան մեջ պարագիտներ ունեցող մալարիայով հիվանդ մարդ:

բ. մալարիա տարածող անոփելես մոծակ և
գ. մոծակի համար մատչելի առողջ մարդ:

Սակայն յեթե բավկան լինելին միան այդ յերեք սպայմանները, մալարիան անհամեմատ ավելի լախ տարածված կլիներ, քան այդ ունենք մենք այսոր: Որինակ, մեր հանրապետության մեջ, այդ գեղքում, վոչ մի առողջ բնակավայր, վոչ մի առողջ մարդ չեր լինի, վորովհետև նույնիսկ ամենաբարձր լեռնային շրջաններում անոփելես մոծակներ կան, իսկ պարագիտներ ունեցող մարդիկ, յեթե տեղում ել չինեն, անպայման կը դժուին այն անձանց մեջ, վորոնք գործով կամ այլ նպատակներով այդտեղ են գալիս մալարիայով վարակված վայրերից:

Բարեբախտաբար դա այդպես չե: Բացի վերևում թված յերեք սպայմաններից, մալարիայի տարածման համար անհրաժեշտ են նաև վորոշ կլիմայական պայմաններ՝ ողի ջերմություն, խոնավություն և այլն:

Մալարիան առհասարակ ավելի շատ տարածված ե տաք յերկրներում: Նույնիսկ այդպիսի տեղերում նրա տարածումը տեղի յե ունենում վոչ բոլոր ամիսների ընթացքում: Դրա պատճան այն ե, վոր մոծակի ստանուի պատի մեջ մարտի այի պարագիտը կարող է զարգանալ միայն այն ժամանակ, յեր դրան ողի ջերմուրյանքը բավական բարձր է (16, 5^o վոչ պակաս ցելսիուսով):

Յեթե վերցնենք Հայաստանի լեռնալին շրջանները, մենք կտեսնենք, վոր նույնիսկ տմապիա ամենաչոք ամիսներին՝ հունիսին և ոգոսառին այստեղ ողի ջերմությունն այնքան ցածր է, վոր մալարիայի պարագիտները մոծակի մարմնում զարգանալ չեն կարող և կվոչնչանան:

Ահա այդ և պատճառը, վոր լեռնային կամ առհասարակ ցուրտ տեղերում մալարիան տարածվել չի կարող:

Տվյալ շրջանում կամ առանձին բնակավայրում տաք յեղանակն ինչքան շուտ և սկսվում գարնանը և ուշ վերջանում աշնանը, այնքան ավելի մեծ հնարավորություն կա մալարիայի տարածման համար:

Մեզ մոտ մալարիան ավելի շատ տարածվում է Արաքս գետի մոտ գտնվող շրջաններում (Հոկտեմբերյանի, Ղամարլի, Վաղարշապատի, Վեդիի, Մեղրու և այլն): Համեմատաբար քիչ ե տարածված ավելի բարձր դիրք ունեցող շրջաններում (Կոտայքի, Աշոտարակի, Գորիսի, Սիսիանի և այլն): Իսկ Սևվանի շուրջը գտնվող լեռնալին շրջաններում, ինչպես և Ապարանի, Ամասիայի, Լինիսականի ու մի շարք այլ շրջաններում տեղական մալարիա չկա: Այդ շրջաններում յեղած մալարիայով հիվանդ մարդիկ վարակվել են վոչ տեղում այլ մի ուրիշ, մալարիայության ուրագնում ապրելու կամ նույնիսկ այդ շրջաններով անցնելու ժամանակ:

ԻՆՉ ՎՆՍՍ Ե ՀԱՅՑՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ ԿՈԼԽՈԶԻՆ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ

Մեր յերկրում, ինչպես և ամբողջ Անդրկովկասում մալարիան ամենատարածված հիվանդությունն է: Մալարիան ուսումնամբ ըստ ու նրա գեմ պայքարող հիմնարկությունների՝ տրոպիկական ինստիտուտի և տրոպիկական կայանների և դիսպանսերների հետազոտությունները պարզել են, վոր մեր հանրապետության սահմաններում մի քան հարյուր հազար մարդ կա, վորոնք վարակված են մալարիայով:

Շնորհիվ մալարիայի այդպիսի լայն տարածման, շատերն այսպես են ընտելանում նրան, վոր կարծում են, թե մեզ մոտ անփուսափելի յե նրա գոյությունը. վոր նա միշտ յեղել և պետք ե լինի: Շատ հիվանդներ նույնիսկ մոռանում են իրենց հիվանդության մասին և նորից հիշում են միայն այն ժամանակ, յերբ նրանց թագնված մալարիան թարմանում ե և սահպում մտնել անկողին կամ կարվել աշխատանքից:

Այդպիսի, կարելի յե ասել, հաշտվողական վերաբերմունքը

դեպի մալարիան միանգամայն անթույլատրելի յե ու կասակար: Դրա մասին կխոսենք քիչ հետո:

Մալարիան մեր աշխատավորւթյան համար շատ խոշոր չարիք է: Այդ պետք լավ իմանա և յերբեք չմոռանա ամեն մի խորհրդային քաղաքացի, ամեն մի բանվոր, կոլխոզիկ:

Մալարիայի հասցրած վնասները շատ բազմատեսակ են: Այդ վնասները առավելապես աչքի յեն ընկնում այն ժամանակ, յերբ այս կամ այն պատճառներից մալարիան ավելի ուժեղանում է, կամ ինչպես առում են, զարգանում է մալարիայի եպիտեմիան (համաճարակը):

Առաջին հերթին աչքի յե ընկնում այն, վոր մալարիայի տարածման ժամանակ հիվանդանում են մեծ թվով մարդիկ, աշխատավորներ կամ նրանց յերեխաները: Այդ հաճախ լինում է դաշտային աշխատանքի ամենայենում շրջանը: Հիվանդ մարդը ժամանակավորապես զրկվում է վոչ միայն առողջությունից և ուրախ ու բախտավոր կյանք վայելելուց, այլ նաև աշխատելու հնարավորությունից: Դողացնողը ստիպված է լինում գաշտը գընալու փոխարեն անկողին մտնել: Շատ դեպքերում աշխատանքից կտրվում են առաջ ընտանիքի մի ուրիշ անդամը, վորպեսի ինամի հիվանդին: Դա համարյա միշտ տեղի յե ունենում փոքր յերեխայի հիվանդացած ժամանակ: Իսկ մենք զիտենք, վոր յերեխաներն ավելի շուտ և ավելի հաճախ են հիվանդացած մալարիայով:

Շատ տեղերում քննել են ու պարզել, թե ամեն մի մալարիայով հիվանդ միջին հաշվով ինչքան ժամանակով ե աշխատանքից կտրվում: Այդ ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր մալարիայով հիվանդ ամեն մի մարդ տարվա ընթացքում կորցնում է 5-ից մինչև 25 — 30 և ավելի աշխատանքային որ: Կորցրած որերի թիվը կախված է մալարիայի տարածման չափից: Հիվանդության սովորական ընթացքի ժամանակ, միջին թվով, ամեն մի մարդ կորցնում է մոտ տասը աշխոր, իսկ եպիտեմիաների (համաճարակների) ժամանակ ավելի շատ: Բացի այդ առողջ վայըրերից յեկած մարդկանց հիվանդությունը տեղում է ավելի յերկար և ունենում ավելի ծանր ընթացք, մինչդեռ տեղացիներինը՝ համեմատաբար քիչ գեղքերում և այդպիսի ընույթ ունենում:

Յեթե ընդունենք, վոր մալարիայով վարակված մեր վայըրերում ամեն մի հիվանդ, տարվա ընթացքում, կորցնում ենույն

իսկ միայն 10 աշխատանքային որ, ապա այդ դեպքում ել մենք շատ զգալի կորուստ կունենանք յուրաքանչյուր կոլխոզի համար:

Վորպեսզի ավելի լավ պատկերացում ունենանք այդ վնասի չափերի մասին բերենք հետեւյալ թիվը: Հայկական ԽՍՀ-ի սահմաններում նույնիսկ այժմ, յերբ մալարիան անհամեմատ ավելի քիչ է տարածված, քան անցյալում, աշխատավորությունն ամեն տարի կորցնում է կես միլիոնից շատ ավելի աշխատանքային որ, այսինքն այնքան, ինչքան հարկավոր է մի լավ գործարան կառուցելու համար:

Մալարիայից ինչքան ավելի շատ են վարակված տվյալ կոլխոզի աշխատավորները, վորքան առողջապահական որգանները և հենց իրենք կոլխոզնիկները քիչ ուշադրություն են զարձնում մալարիայի դեմ պայքարի վրա, այնքան ավելի մեծ է նրանց կորցրած աշխորերի թիվը: Քիչ չեն լինում դեպքեր, յերբ կորցրած աշխորերը տվյալ կոլխոզում հաշվում են հարյուրներով, նույնիսկ հազարներով:

Մինչեւ աշխորերի կորուստը բացասաբար է անդրադառնում թե առանձին կոլխոզնիկի և թե ամբողջ կոլխոզի տնտեսական գրության վրա: Կոլխոզնիկի տնտեսական ապահովության գլխավոր հիմքը նրա վաստակած աշխորերի համար ստացած գումարներն են ու մթերքները: Կոլխոզնիկը կտրվելով աշխատանքից նա չի կարողանում այնքան աշխոր տալ ինչքան ընդունակ և տալու առողջ ժամանակը, իսկ դա պակասեցնում է նրա ստանալիք բարիքների քանակը, դա վորոշ չափով սահմանափակում է տվյալ կոլխոզնիկի տնտեսական հնարավորությունները, վայըրելու կոլխոզնիկ աշխատավորության համար միանգամայն ապահովված կուլտուրական և ունաոր կյանքը, վորի համար կոլխոզային նոր, Ստալինյան կանոնադրությունը մեծ ու լայն ճանապարհ է բաց արել:

Մալարիայի պատճառով կորցրած աշխորերն ասավելապես ծանր հետևանք են ունենում այն պատճառով, վոր հիվանդությունն ավելի լայն տարածվում է գյուղատնտեսական ամենապատճառահատու աշխատանքների շրջաններում՝ գարնանը — ցանքսի ժամանակ և մանավանդ՝ աշնանը — բերքահավաքին:

Այստեղ պետք է ավելացնել նաև այն, վոր նույնիսկ հիվանդության սուր շրջանն անցնելուց հետո ել կոլխոզնիկը դեռ մի քանի որ այնքան թույլ է զգում իրեն, վոր չի կարողանում կտնոնավոր աշխատել նրա աշխատանքի արտադրողականությունն

ավելի պակաս և լինում քան լրիվ առողջ ժամանակ: Դա ևս, ինարկե, ազդում և նրա ստացած աշխորերի քանակի վրա:

Կոլխոզնիկը աշխատանքից կտրվելուց կամ քիչ արտադրութակնություն տալուց տուժում և վոչ միայն ինքը, այլև ամբողջ կոլխոզը և մեր պետությունը:

Ցեմե հիվանդության պատճառով աշխատանքի յեն գնում ավելի քիչ կոլխոզնիկներ, քան այդ նախատեսված և պլանով, դա անդրադառնում է պլանները ժամանակին կատարելուն, ցանքսն ուշանում է, բերքը լրիվ ու ժամանակին չի հավաքվում, նրա մի մասը մնում է դաշտերում կամ այդիներում, փչանում կամ կորցնում և յուր վորակը: Որինակ, յերբ բացված բամբակը իր ժամանակին չի հավաքվում, նրա մի մասը թափվում է, իսկ յերբ սկսվում են անձրկները կամ ձյունը — նրա մի մասը փըշանում և կամ ել ուշ հավաքելուց ստացվում է վատ տեսակի բամբակ: Նույնը կարելի յե ասել նաև խաղողի, ծիախոտի և այլ կուլտուրաների մասին:

Դրա հետևանքը բացասական և լինում շատ տեսակետներից: Կոլխոզը, իսկ նրա միջնորդ նաև մեր արդյունաբերությունն ստանում և ավելի քիչ բամբակ, ծխախոտ և այլն, ստացած նյութերի վորակը իջնում է, իսկ դրա հետ միասին պակասում և նաև նրանց արժեքը: Այդպիսով կոլխոզը չի կարողանում ստանալ պլանով նախատեսված յեկամուտը և դրա հետևանքով ել չի կարողանում լրիվ կատարել յուր շինարարական, կուլտուրական և այլ աշխատանքների պլանը:

Կոլխոզի յեկամուտի նվազելը ազդում և աշխորերի արժեքի վրա, կոլխոզնիկն ամեն մի աշխորի համար թե դրամով և թե մթերքներով ավելի քիչ և ստանում քան կարող եր ստանալ յեթե հիվանդությունը չիներ, մյուս կողմից կոլխոզը կատարելու կողերակատարել յուր պլանները:

Իսկ յեթե սոցիալիստական արդյունաբերությունը, որինակ մեր տեքստիլ (կտորեղեն պատրաստող) գործարանները, ստանում են ավելի քիչ բամբակ, քան սպասում եյին, դա ևս յուր հերթին խանգարում և նրանց պլանների կատարմանը:

Մալարիայի հասցրած վասու միայն դրանով չի ստանաւ փակում: Առաստարակ, ինչպես ամեն մի հիվանդություն, նույնպես և մալարիան անցանկալի յերեւյթ եւ: Նա կարձ կամ յերկար ժամանակով դժբախտացնում և մարդուն և զրկում նրան այն ուրախ ու բախտավոր կյանքից, վորը վայելում են լայնա-

տարած Խորհրդային Միության աշխատավորները Ստալինյան Սահմանադրության հիման վրա: Հիվանդությունը տևում է կարճ ժամանակ, յեթե հիվանդը դիմում ե բժշկական ոգնության և կանոնավոր բուժում է, ապա մալարիան նրա առողջության վրա առանձին վատ ազդեցություն չի թողնում: Իսկ յերբ հիվանդությունը անուշադրության և մատնվում, նա ընդունում է տեսական բնույթ, հաճախ տալիս է կրկնություններ (ռեցիդիվներ): Այդ դեպքում նա կարող է խոր ազդեցություն գործել աշխատավորի առողջության, նրա ֆիզիկական զրության վրա:

Այդպիսով հիվանդների մեջ բավական թվով պատճառում են այնպիսիները, վորոնք վորոշ ժամանակով դառնում են հասարակության համար վոչ լիառուժ անդամ: Որինակ, զինակոչի ժամանակ նրանց մի մասը ճանաչվում է վոչ պիտանի զինվորական ծառայության համար և զրկվում (թեկուղ ժամանակավորապես) հնարավորությունից կատարելու խորհրդային քաղաքացու ամենապատվավոր պարտականությունը՝ զենքը ձեռքին պաշտպանել մեր սոցիալիստական հայրենիքը ամեն տեսակի թշնամիներից:

Յերկարատև և ուժեղ մալարիայով տառապող կանանց մոտ նկատվում է մի այլ յերեւյթ, յերեմն նրանք յերեխա չեն ունենում, չեն հղիանում կամ ել նրանց հղիությունը չի շարունակվում մինչև նորմալ ծննդաբերությունը, այլ ընդհատվում է, վիժում և տեղի ունենում: Այդպիսի կանայք մինչև մալարիայից լավ բուժվելը խիստ դժբախտ են զգում իրենց, չկարողանալով իրագործել իրենց բուռն ցանկությունը՝ յերեխա ունենալ, վայելել մայրական զգացմունքի քաղցրությունը: Մեզ հայտնի յեն բազմաթիվ դեպքեր, յերբ այդպիսի կանայք կանոնավոր բուժվելուց հետո կարողացել են վայելել մայր լինելու յերջանկությունը:

Ավելի ծանր և ազդում մալարիան փոքր հասակի յերեխաների վրա: Հիվանդությունը ժամանակին և կանոնավոր չըրուժելու դեպքում մահվան վտանգն նրանց համար ավելի շատ ե քան մեծերի համար:

Բավարկանին հաճախ շատ փոքր յերեխաների մոտ մալարիայի հետևանքով լուծ և առաջանում, վորն յուր հերթին կարող է յերեխայի մահվան պատճառ դառնալ յերբ շուտ չեն դիմում բժշկին և լրիվ չեն կատարում նրա ցուցումները:

Այսպիսով մալարիայի պատճառով մի կողմից կարող ե պաշտամել ծնվող յերեխաների թիվը, իսկ մյուս կողմից՝ բարձրանալ նորմալ մահացությունը ազգաբնակության մեջ, չետևանքը կլինի այն, վոր տվյալ բնակավայրում կնվազի բնակչության թվի աճը կամ թե բնակիչների թիվը ավելանալու փոխարեն կըսկի պակասել վերջին յերեխույթները նկատվում ենին մալարիայով խիստ վարակված գյուղերում (Վաղարշապատի, Հոկտեմբերյանի շրջաններում ևայն) խորհրդայնացումից առաջ և նրա առաջին տարիներին Ներկայումս ել դեռ, յեթե համեմատենք մալարիայով խիստ վարակված գյուղերի բնակչության աճը բոլորովին առողջ գյուղերի հետ, նկատելի տարրերություն կդանենք նրանց մեջ. առողջ գյուղերում բնակչությունն ավելի արագ ե աճում, քան խիստ մալարիայոտ բնակավայրերում:

Թուլացնելով մարդու մարմնի ուժերը մալարիան հող ե ստեղծում մյուս վարակիչ հիվանդությունների ավելի լայն տարածման համար: Հայտնի յենույնպես, վոր մալարիա ունեցողների մեջ մի քանի հիվանդություններ ավելի ծանր ընթացք են ունենում և ավելի հաճախ մասով վերջանում: Այդպիսիների շարքին ե պատկանում, որինակ, թոքերի բորբոքումը:

Յերկար տարիներ վնասաբեր ազդելով մարդու վրա, մալարիան պատճառ ե դառնում նրա կյանքի տեղորության համեմատաբար կարճանալուն: Խորհրդայնացման սկզբի տարիներին մալարիայով վարակված մեր շրջաններում ծեր մարդ շատ քիչ կարելի յեր տեսնել: Այժմ կոլխոզների տնտեսական դրության անհամեմատ բարելավվելու, ինչպես նաև մալարիայի գեմ տարփող կազմակերպված պայքարի շնորհիվ դրությունն անհամեմատ փոխվել, լավացել ե, բայց այժմ ել դեռ չի կարելի ասել, վոր այդ հիվանդության նման ազդեցությունը խսպառ վերացել ե:

Մենք այստեղ թվեցինք մալարիայի հասցրած վնասներից մի քանիսը միայն: Մի փոքրիկ գրքույթիում բոլորի մասին խոսելը անհնար ե: Բայց կարծում ենք, ասածներն ել բավական ե, վորպեսզի ընթերցողը կարողանա յեղակացնել, թե ինչ խոշոր չարիք ե մալարիան մեր աշխատավորության, մեր ամբողջ հանրապետություն համար:

Հարց ե ծագում թե մեզ մոտ, արվելմ ե արդյոք ամեն ինչ այդ գարավոր թշնամու գեմ համապատասխան պայքար տառնելու համար: Ի՞նչ խոսք՝ այս, սակայն դեռ մենք չենք կարող պարծենալ և հանգստանալ կատարածով:

Կասկածից գուրա ե, վոր խորհրդայնացումից հետո շատ ու շատ բան ե արված, վորի հետևանքով խիստ սահմանափակվել են մալարիայի հասցրած վնասները: Բայց վորպես խոշոր չարիք, նագեռ լիովին չի կորցրել յուր ուժը և շատ բնակավայրեր, բավական թվով շրջաններ գեռ գտնվում են մալարիայի եպիտեմիայի ժամանակ առ ժամանակ զարգանալու վտանգի տակ: Համարյա ամեն տարի այս կամ այն գյուղում, կամ շրջանում նա բարձրացնում ե յուր գլուխը և հիշեցնում, վոր նա վերջնականապես գեռ չի վերացված:

Այս հանգամանքը ստիպում է թե առողջապահական մարմիններին և թե կուսակցական, խորհրդային, հասարակական որգաններին ու կազմակերպություններին, կոլխոզներին ու կոլխոզներին, մեր վողջ բանվորությանը լարել ուշադրությունը դեպի մալարիայի գեմ պայքարի խնդիրները:

Թերագնահատել մալարիան, վորպես խոշոր չարիք, նշանակում ե վնասել աշխատավորությանը և սոցիալիստական պետությանը:

Մեր անդասակարգ սոցիալիստական հասարակությունը, զինված Ստալինյան Սահմանադրությամբ պետք ե վճռական պայքար մզի այդ չարիքի գեմ, նպատակ ունենալով կարձ ժամանակում, մի քանի տարվա ընթացքում լրիվ արմատախիլ անել նրան:

Այդ պայքարը հաջող արդյունք կունենա միմիայն այն ժամանակ, յերբ նրան ակտիվ կմասնակցեն բոլոր աշխատավորները, իսկ դրա համար հարկավոր ե, վոր նրանք լավ տեղյակ մենք պայքարի միջոցներին:

Դիմությունը վաղուց ե զբաղվում այդ խնդիրների ուսումնասիրությամբ:

Այդ աշխատանքների շնորհիվ մենք ալսոր աիրապետում ենք այն միջոցներին, վորոնցով հասարակոր ե խսպառ վերացնել մալարիան կամ դարձնել նրան հազվադեպ պատահող մի հիվանդություն:

Մենք սկզբում ասացինք, վոր մալարիայի միակ տարածողը մոծակն ե: Ուրեմն պայքարի միջոցները պետք ե ուղղված լինեն առաջին հերթին մոծակների գեմ: Իսկ դրա համար հարկավոր ե պարզ պատկերացնել, թե վորտեղ և ինչ պայմաններում են դարպանում ու բազմանում մոծակները:

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՆ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՄՈԾԱԿՆԵՐԸ

Մոծակը զարգանում ու բազմանում ե բացառապես կանգնած կամ դանդաղ հասալ ջրերի մեջ, Յեթե ջրերի հոսանքի արագությունը մի վայրկյանում 20 սանտիմետրից արագ ե, այլպիսի ջրերում մոծակը զարգանալ չի կարող: Առուների և գետերի հոսանքի արագությունը, նրանց բոլոր մասերում, նույնը չի լինում, ափերի մոտ արագությունն ավելի քիչ ե, քան ափերից հեռու մասերում: Վորպեսզի առվի մեջ մոծակը բոլորովին չկարողանա բազմանալ, հարկավոր ե, վոր ափերի մոտ ել նա ունենա հոսանքի պահանջվող արագությունը,

Նշանակություն ունի և ջրի խորությունը: Շատ խոր ջրերում մոծակը զարգանալ չի կարող: Սովորաբար 2 մետրից ավելի խոր ջրերում մոծակների թրթուրներ չեն լինում: Մոծակի համար ամենից հարմարը ջրի 20-ից մինչև 60 սանտիմետր խորությունն ե:

Ջրի ջերմությունը ևս կարող ե խանգարել կամ նախատել մոծակի զարգացմանը: Յեթե ջրի ջերմությունը 12 աստիճանից ցածր կամ 40 աստիճանից բարձր ե, ապա այդպիսի ջրերում մոծակը չի բազմանա, թեև սառը ջրի մեջ վորոշ տեսակի մոծակների թրթուրներ դեռ կարող են պահպանել իրենց գոյությունը: Մոծակի թրթուրների աճելու ու բազմանալու համար ամենանպատակոր ջերմությունը 25-ից մինչև 30⁰ ջերմությունն է (Ցելսիուս): Վորքան ջրի ջերմությունը ավելի բարձր ե (սկսած 12 աստիճանից) այնքան նրա զարգացումը արագ ե կատարվում:

Մոծակները չեն կարողանում բազմանալ այն ջրերում, վորոնց մակերեսը միշտ տատանվում, ալեկոծվում ե, անա թե ինչու լճերի ափերն շատ համախ դժվար ե թրթուրներ գտնել:

Յեթե ջուրը լավ լուսավորված ե, յեթե նրա վրա ընկնում են արևի ճառագայթները, ապա նրա մեջ մոծակները կզարդանան ավելի արագ և առատ, քան այն ջրերում, վորոնք միշտ պատաժ են ստվերով: Որինակ, հորերի մեջ ավելի դժվար ե թըրթուր գտնել, քան բաց ավազաններում:

Նշանակություն ունի մոծակների համար նաև ջրի քիմիական կազմը: Այսպես, թրթուրներ չեն պատահում այն ջրերում, վորոնք իրենց մեջ մեծ քանակությամբ աղեր են պարունակում: Այդ պատճենը աղեր անողերի աղոտ հողերի վրա

առաջանում են կանգնած ջրեր, նրանք հաճախ աղատ են մնում թրթուրներից:

Հնարավոր չե թրթուրների բազմացումը շատ կեղտոտ, նեխովող ջրերում: Որինակ՝ աղբակույտերի մոտ հավաքվող ջրականգերում, ինչքան ել նրանք կանգնած մնան, մոծակներ չեն զարգանա:

Ջրի մեջ գտնվող բույսերը և առավելապես կենդանիները միծ նշանակություն ունեն թրթուրների զարգացման համար:

Յեթե ջրի մեջ կան այնպիսի կենդանիներ, վորոնք ուստում են թրթուրներին, որինակ յեթե այդտեղ լողում են փոքրիկ ձկնիկներ, հաղիկ թե ջրի մեջ կարելի լինի թրթուրներ գտնել:

Այս բոլորը բավական սահմանափակում են մոծակների զարգացման հնարավորությունները: Բայց այնուամենայնիվ ամեն տեղ կարելի յե գտնել բավական քանակությամբ այնպիսի ջրեր, վորոնց մեջ մոծակը զարգանում ու բազմանում ե անսահման չափերով և կատարում յուր չար գործը:

Ուրեմն մեր նպատակներից մեկը պիտի լինի գոնել բոլոր այն ջրերը, ուր զարգանում ե մոծակի սերունդը, վորպեսզի կարողանանք, ինչպես ասում են, թշնամուն ինեղել իր բնում:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԶՐԱԿԱՆԳԵՐՆ ՈՒ ՃԱՀՃԱՅՈՒՄՆԵՐԻ

Մոծակների զարգանալու համար հարմար ջրականգեր և ճահճացումներ կարող են առաջանալ իրեկու ճանապարհով՝ ընական և արհեստական:

Ծնական ճահճացումները գոյանում են ինքնարերաբար, առանց մարդու մասնակցության: Ավելի հաճախ նրանք առաջանում են այն տեղերում, ուր ստորերկրյա ջրերը շատ բարձր են և, գուրս ծծվելով գետնից, կուտակվում են նրա մակերեսին: Այդպիսի ճահճացումներ մենք շատ ունենք Արագգալանի մոտ, Ղամարվիլ, Վաղարշապատի, Հոկտեմբերյանի և այլ շրջաններում: Շատ գեղքերում նրանք կենտրոնանում են գետերի նախկին հունի մեջ, վորով այլև չի հոսում գետը (Նկ. 6):

Հաճախ բավական մեծ, թեև ժամանակավոր, ճահճաներ են գոյանում հորդ անձրևների ժամանակ կամ գարնանը՝ ձյան արագ հալվելուց, յերբ գետերը և առուները ստանում են ավելի շատ ջուր, քան նրանք կարող են տանել և դրա հետեւանքով

գուրս են գալիս ափերից ու վողողում շրջակա տարածություն-ները: Այդ բանը տեղի յե ունենում, որինակ, Զանգու գետի հետ Նարիմանլույից վոչ հեռու հողամասերում: Նման ճահճացումների մի մասը կարող է մնալ շաբաթներով ու նույնիսկ ամիսներով և մոծակների զարգացման բուն դառնալ:

Վորոշ գեղքերում, առանց հեղեղումների ել գետերն ընդու-նակ են ճահճացումներ առաջացնել: Յերբ ամառվա շոգին ջրի քանակը պակասում է, գետի հունի վորոշ մասն ազատվում է ջրի հոսանքից և այդ կետերում ջուրը կանգնած է մնում: Այդ ջրականդերը շատ հարմար են մոծակների բազմանալու համար: Նման յերեսույթ նկատվում է, որինակ, Փամբակիչայի հունում:



Նկ. 6.

Կիրովականից վոչ հեռու կշաղ և Դարբաս գյուղերի մոտ և շատ ուրիշ տեղերում:

Յերեմին ճահճացումներ են առաջանում աղբյուրներից, յե-թե նրանց ջրի հոսելու համար չկա լավ հուն և ջուրը ցըփում է այս ու այն կողմը:

Յեթե գետի ափերը քարքարուտ են և ջուրը ազատ չի հո-սում, ապա մեծ քարերի, ժայռերի հետեւն ջուրը կարող և այն-քան դանդաղ հոսանք ունենալ, վոր նրա մեջ թթուրները հեշտու-թյամբ կզարդանան: Մոծակի բազմացման այդպիսի տեղեր շատ

կան Մեղրու, Իջևանի, Շամշադինի և այլ շրջաններում:

Բնական ճահճացումներն առանձին շրջաններում գրավում են յերեմին շատ մեծ տարածություններ և հիմնական պատճառ հանդիսանում մոծակների զարգանալու, հետեապես մալարիայի տարածվելու համար (Ղամբալի, Վաղարշապատի, Հոկտեմ-բերյանի, Վեղու շրջանների վորոշ մասերը):

Սակայն վոչ պակաս դեր են կատարում այդ գործում արհեստական ճահճացումներն ու ջրականդերը, վորոնք առաջա-նում են մարդու անդիտակից կամ անփույթ վերաբերմունքի շնորհիվ: Մի շարք շրջաններում մալարիայի տարածման պատ-ճառը միայն այդպիսի ճահճացումների հետ է կապված:

Ա.ՐՀԵՍՏԱԿԱՆ ՃԱՀՃԱՑՈՒՄՆԵՐ Ա.ԲԱԶԱՆԱԼՈՒ ՊԱՏԱՌԱՆԵՐԻ

Արհեստական ճահճացումներ ու ջրականդեր առաջա-նալու ամիջական պատճառները շատ բազմատեսակ են: Մենք այսեղ կծանոթանանք նրանցից միայն այնպիսիների հետ, վորոնք գոյություն ունեն մեր կոլխոզներից շատերում:

Գյուղական վայրերում այդ տեսակետից շատ խոշոր դեր են կատարում վոռողման ցանցի վատ կառուցումը և սխալ ոգտա-գործումը: Մենք ունենք բազմաթիվ կոլխոզներ, ուր մալարիա լուրսվին չեր լինի, յեթե լինելին այդ թերությունները: Թանի վոր դա շատ տարածված յերեսույթ է, անհրաժեշտ ենք համարում գրա վրա ավելի մանրամասնորեն կանգ առնել:

Արհեստական վոռողման ցանց գոյություն ունի մեր շրջան-ներից շատերում: Արհեստական վոռողումն է, վոր կենդանաց-նում և ջրագուրկ անապատները և դարձնում նրանց կոլխոզային դաշտեր ու այգիներ, վորոնք կոլխոզների հարստացման հիմքն են կազմում:

Վոռողման ցանցը մասամբ կառուցված է գեռ հին ժամա-նակներում, մինչև իմակիալիստական պատերազմը, իսկ զգալի չափով ստեղծված է կամ հիմնովին վերանորոգված խորհրդայ-նացումից հետո (Ղոկրի, Փոքր Սարգարագի, Այղը Լձի, Վաղար-շապատի, Արազպայանի առուները և շատ ուրիշները):

Այդ ցանցերի կառուցման ժամանակ թույլ են տրված մի քանի այնպիսի սխալներ ու թերություններ, վորոնք հետապայում պատճառ են դասել զգալի տարածություններ գրավող ճահճա-

ցումներ առաջանալուն: Այդ թերություններն առավել շատ են հին առուների վրա: Այդ թերություններին լավ ծանոթ պիտի կինի յուրաքանչյուր կոլխոզնիկ, վորպեսզի հետագայում չթույլաւըրի կրկնել նրանց, իսկ մյուս կողմից միջոցներ ձեռք առնի յեղածները վերացնելու համար:

Դաշտը վոռոգելու համար հարկավոր և ունենալ ջուր բերող առու, վորի մեջ ջուրը պետք և ավելի բարձր լինի քան վոռոգվաղ տարածությունը, այլ կերպ ջուրը չի հոսի դեպի գաղտերը: Աւրեմ առուն չի կարող ամբողջությամբ գետնից ցածր լինել, այլ նրա ափերը պիտի ավելի բարձր լինեն: Այդ նպատակին հասնելու համար առվի յերկու կողմից կառուցված են թմբեր, վորի համար հող և հարկավոր, չեռվից հող բերելը ձեռնտու չե, դա շատ կթանգացնի շինարարությունը: Դրա համար ել հողը սովորաբար վերցնում են առվի մոտից, նրա յերկու կողմերից, հենց այսեղ ել թագնված և արհեստական ճահճացումներ առաջնալու խոշոր վտանգը:

Յեթե կառուցուղը մալարիայի մասին գաղափար չունի կամ ել անուշաղրության և մատնում նրա գեմ պայքարելու խնդիրները, նա առվից անմիջապես մոտ փոսեր և փորում և ողտագործում հանած հողը: Դրա հետևանքը լինում է հետելալը.

ա) Յեթե փոսերն առվից շատ մոտ են, առվի մեջ ջուր թողնելուց հետո, նա սկսում է ծծվել և կուտակվել փոսերի մեջ, դարձնելով նրանց մշտական ու խիստ վտանգավոր ջրականգեր:

բ) Յեթե փոսերը շատ խոր են, իսկ ստորերկրյա ջրերը բարձր են կանգնած, ապա ջուրը ծծվում է փոսի հատակից և նույնպես ջրականգ առաջացնում:

գ) Յեթե փոսերը աղատ են մնում թված յերկու վտանգից, այնուամենայնիվ նրանք կարող են լցնել անձրևներից կամ դաշտերը ջրելու ժամանակ ավելացած ջրով և վերածվել ճահճի:

Ճահճներ են գոյանում և այն ժամանակ, յերբ կառուցված առուն անցնում է սարի լանջով, յեթե նրա դեպի ցածր նայող ափը ամուր չե և հեղառությամբ ջուր ե թողնում, ապա դուրս ծըծված ջուրը հետզհետե կհավաքվի շրջակա դաշտերի ավելի ցածր մասերում և ճահճացում կդոյցացնի:

Այդ թերությունները վեստում են վոչ միայն մալարիա առաջացնելու տեսակետից, այլ և պատճառ են դառնում մեծ քանակությամբ ջրի կորստի, վորի հետևանքով կրծատվում ե վոռոգվող դաշտերի և այդիների տարածությունը կամ խանգարվում

ցանքսերի կանոնավոր վոռոգումը:

Թված սխալներից հնարավոր ե խուսափել: Նոր առուներ կառուցելու կամ հները վերանորոգելու ժամանակ հողը այնպես պիտի վերցնել, վոր առաջացած փոսերում ջուր չկուտակվի: Իսկ դրա համար հարկավոր ե, վոր՝

ա) Գետինը փորվի առուներից վոչ մոտ, քան յերեքից հինգ մետր հեռավորության վրա:

բ) Փոսերը շատ խոր չինեն և չհանեն ստորերկրյա ջրերին, յերբ նրանք ունեն նույնիսկ ամենաբարձր դիրքը (գարնանը) և բացի այդ տարբեր տեղ փորած փոսերը ունենան համարյա նույն խորությունը:

գ) Փորված բոլոր փոսերն անպայման միացված լինեն իրար հետ գոնե առուների միջոցով և ունենան ընդհանուր թերություն դեպի մի կողմ, այսինքն դեպի այն կողմը, վորտեղ կարող են հոսել և թափվել նրանց մեջ պատահաբար ընկած ջըրերը:

Ինչ վերաբերում է արգեն գոյացած փոսերին, այդպիսիները կամ պետք և լցնել հողով, յեթե նրանք փոքր են, կամ ել նրանց մեջ հավաքված ջրի համար հոսելու հարմարություն ստեղծել:

Ճահճացումներ գոյանալու համար վոչ պակաս հնարավորություններ են լինում վոռոգման ցանցն ոգտագործելու ժամանակի: Այսեղ արդեն մեղքը շատ հաճախ ընկնում է ջուր անող բրիգաների վրա:

Ավելի հաճախ ճահճացումներ գոյանում են այն դեպում, յերբ հողերի վրա բաց են թողնում ավելի ջուր, քան դա պահանջվում է: Զրի ավելցուկը հոսում է դեպի գիտնի ավելի ցածր մասերը: Յեթե վոռոգման ցանցը ճարտարապետական սխալների չե և չունի այնպիսի հատուկ առուներ, վորոնք նախատեսված չե զրի ավելցուկը դուրս տանելու համար, ապա նրանցից գոյանում է ջրականգ, վորը յերկար մնալու դեպքում մոծակների զարգացման համար նպաստավոր տեղ է հանդիսանում:


Այդ յերեսույթը ավելի հեշտ կարող է տեղի ունենալ գիշերները ջրելու ժամանակ, յերբ որինակ, անուշաղիր ջրողը պատահաբար քնում է և առանց խնամքի թողնում առուն: Ուստի դաշտեր ջրելու գործը հարկավոր է հանձնարարել միանգամայն գիտակից մարդկանց, վորոնք բացի բարեխիղճ լինելուց, լավ ծանոթ են մալարիայի տարածվելու պատճառներին:

Առուների վատ խնամելը նույնպես առիթ և տալիս ճահճացումներ գոյանալուն։ Այդպիսի պատկեր մեղ շատ հաճախ պատահել ե. առվից ջուր վերցնելու համար մի կետում բահով պատռել են նրա ափը, բայց դաշտը ջրելուց հետո ծուլացել են պատռած տեղը նորից լավ փակել։ Դրա հետևանքով ջուրը շարունակել ե դուրս հոսել ճեղքված տեղից թեկուղ և քիչ քանակությամբ և հետզհետե շրջակա տարածության վրա արհեստական ճահճացում գոյացրել։ Յերեմին նման ճահճացումներն առաջանում են մշակած հողերի վրա և վնասում ցանքսերին։ Իսկ յեթե առուներից ջուր վերցնելու կետերը ամեն տեղ կահավորված լինելին կանոնավոր շլյուզներով, այդպիսի յերեւոյթ չեր նկատվի։ Դրա համար ել յուրաքանչյուր կոլխոզ հերթական խնդիր պիտի դարձնի կահավորել յուր դաշտերի ու այդիների վոռոգման ցանցը շլյուզներով ու ջուրը բաժանող սարքավորումով և միշտ հետեւ նրանց ձիշտ ոգտագործմանը։

Առուների պատերը յերբեմն պատովում ու փչացվում են կենդանիների կողմից։ Այդ գործում ավելի վնասակար գեր են կատարում անխնամ թողնված զոմեշները, վորոնք շատ են սիրում ջրի մեջ պառկել։ Դրա պատճառը, ինարկե, առաջին հերթին, մարդն ե, յեթե մի կողմից չթողնեն կենդանիներին մտնել առուները, իսկ մյուս կողմից նրանց ջրելու համար հատկացնեն միշտ վորոշ կետեր, ուր ափերը քարերով ամրացրած լինեն, և բացի այդ յեթե ճանապարհն անցնելու տեղերում առուների վրա ամեն տեղ կանոնավոր կամուրջներ լինեն, կենդանիներն այդպիսի վնաս չելին հասցնի։

Առուներով հոսող ջուրը շատ գեղքերում, իսկ առավելապես գարնանը, յուր մեջ մեծ քանակությամբ տիղմ և ափազ և պարունակում։ Հետզհետե այդ մասնիկները նստում են առվի հատակին և այդպիսով ժամանակի ընթացքում (շաբաթների կամ ամիսների) նստվածքն այնքան ե շատանում, վոր սկսում է խանգարել հոսանքին, կամ առվի մեջ ջուրը բարձրանում ե և սկսում դուրս թափել ափերից, կամ ել հոսանքը դանդաղում ե, առուն ափելի քիչ ջուր ե կարողանում բաց թողնել։ Իսկ դանդաղ հոսանքը նպաստում ե առվի յեղբերին բույսեր առաջանալուն։ Բույսերն իրենց հերթին ավելի յեն դանդաղեցնում ջրի հոսանքն ափերի մոտ և վերջի վերջո ստեղծվում են թրթուրների զարդացման համար բարենպատ պայմաններ (նկ. 7)։

Յեթ առուները մաքրվեն կանոնավոր ու խնամքով, յեթե նրանք պարբերաբար ազատվեն նրանց ափերում աճող ըույսերից, այդ բավական կլինի, վոր առուների մեջ բոլորովին մոծակեներ չղարգանան։



Նկ. 7.

Սրհեստական ճահճացումներ գոյանում են վոռոգման ցանցից անկախ, ուրիշ շատ պատճառներից։ Մեր հանրապետության ամենավարակված շրջանների համար այդ պատճառներից, առաջին հերթին ուշագրության արժանի յե «չիմ» կտրելը կամ շինարարության համար հում աղյուս պատրաստելը, ինարկե, այդ գեղքերում ճահճացումներ ու ջրականգեր են գոյանում այն ժամանակ, յերբ չեն պահպանվում համապատասխան հակամալարիային պահանջները։

Քարից աղքատ տափարակային շրջանների համար հիմնական շինարարական նյութը առայժմ հում աղյուսն ե, իսկ վոչ հաղվագյուտ գեղքերում նաև «չիմը»։

«Չիմը» լինում ե այնտեղ, ուր գետինը խոնավ ե, վորտեղ ստորերկրյա ջրերը շատ բարձր են, այսինքն կիսաճահճացած տեղերում ճահճանների յեղբերին։ «Չիմ» կտրած կետերում գոյանում

Ան նոր փոսեր, վորոնք շուտով լցվում են ջրով և ճահճանում:
Իսկ աղյուս պատրաստելու համար շատ հաճախ ոգտագործում
են հենց առուների մոտ գտնվող հողը: Աղյուս պատրաստելուց
հետո գոյանում են բավական մեծ փոսեր, վորոնք լցվում են
առվի ջրով կամ նրանց մեջ են ծծվում ստորերկրյա ջրերը:
Յերկու գեպքում ել առաջանում են շատ վտանգավոր ջրական-
գեր, վորոնք պահպանում են իրենց գոյությունը տարիների
ընթացքում:

Ներկայումս, յերբ կոլխոզնիկների տնտեսական դրության
բարձրացման հետ միասին, աճել են աև կուտուրական բնակա-
րանի նրանց պահանջը շատ ուժեղ տեմպերով զարգանում է բնա-
կարանային շինարարությունը: Անհրաժեշտ ե, վոր վոչ մի կոլ-
խոզնիկ յերեք չմոռանա, վոր նոր շինարարության համար սիալ
ձևով պատրաստվող շինանյութ ստանալուց այդպիսի վտանգ
կարող ե առաջանալ:

Վորպեսզի թե նոր շինարարությունը չտուժի և թե միա-
ժամանակ նոր ճահճացումներ չգոյանան հարկավոր ե անպայ-
ման պահպանել հետեւյալ կանոնները՝

ա) Միանգամից հրաժարվել «չիմ» կտրելուց և նրանով շին-
քեր կամ պատեր կառուցելուց:

բ) Աղյուս պատրաստելու համար ոգտագործել այն տեղերը,
վորոնք բարձր են շրջակա տարածությունից, հետեւապես և հող
վերցնելիս չեն կարող ճահճանալ:

գ) Յեթե այդպիսի հարմար տեղեր չկան, ապա գետինը յեր-
երեք չփորել առուներից 5 մետրից մոտ տարածության վրա, վոր-
պեսզի առվի ջուրը հետագայում չկարողանա ծծվել նրանց մեջ
և ճահճացնել: Բացի այդ, չի կարելի փորել խոր փոսեր, մանա-
վանգ այնտեղ, ուր ստորերկրյա ջրերը բարձր են, հարկավոր ե
պատրաստել ավելի լայն, բայց վոչ խոր փոսեր և հետագայում
աշխատել վորքան կարելի յե շուտ լցնել նրանց: Իսկ մինչև լրիվ
լցնելը զգուշանալ, վոր պատահարար նրանց մեջ ջուր չթափվի:

Ճահճացումներ են գոյանում նաև գետի հունում. շինա-
րական նպատակների համար այն տեղից ավագ կամ իսկ են վերց-
նում, գոյացած փոսերը լցվում են գետից ծծվող ջրով ու դառ-
նում մոծակների զարգացման տեղեր: Դրանից խուսափելու հա-
մար ավագ վերցնելիս խոր փոսեր չպիտի առաջացնել, իսկ ջրա-
կանգեր գոյանալու գեպքում — լցնել քարերով ու խճով:

Մի քանի շրջաններում (Ղամարլիի, Վեդիի և ուրիշները)
տնտեսական կարիքների համար ջուր ունենալու նպատակով, հենց
ամիջապես առվի մոտ, պատրաստում են փոսեր և միացնում
առուներին, նրանց մեջ ջուրը քիչ պարզում ե, բայց հոսանք
չունենալով, շատ մեծ հարմարություններ ե ստեղծում թրթուր-
ների զարգացման համար:

Մոծակներն առատորեն բազմանում են նաև ջրով լիքը այն
փոսերում, վորոնք պատրաստվում են կոլխոզային կալերի մոտ՝
հրդեհ ծագելու դեպքում նրա գեմ պայքարելու համար: Մոծակ-
ների զարգացումը կանխարգելելու համար անհրաժեշտ է իսպա-
վերացնել առուների վրա կամ նրանց մոտ ավաղաններ պատրաս-
տելը, յեղած ավաղանները պետք ե անպայման լցնել:

Իսկ ինչ վերաբերում ե կալերում պատրաստվող փոսերին,
ջրի ավաղաններին, նրանց վերցնել չի կարելի, այլ պետք ե լավ
ծածկել նրանց յերեսը, վորպեսզի մոծակները չկարողանան ներս
մտնել ու ձու դնել: Իսկ անհրաժեշտ դեպքում ջուր վերցնելու
համար ծածկի մեջ պետք ե թողնել համապատասխան տնցք, շի-
նել հեշտ բացվող կափարիչ վորը նույնպես անցքեր չպետք ե
ունենալ:

Նույն ձեռվ պետք ե կահավորել նաև ջրի այն ավաղանները,
վորոնց մեջ մեր մի շարք շրջաններում ջրի պաշար են հավա-
քում ամառվա ընթացքում դաշտերը (ավելի հաճախ ծխախոտի
ցանքները) ջրելու համար:

Մոծակներ կարող են գոյանալ նույնիսկ անպետքացած ու
դեն գցած կճռեմներում ու այլ անոթներում, յեթե նրանց մեջ
ջուր ե հավաքվում և մնում 15 որ և ավելի:

Շատ հաճախ մոծակների բռն են դառնում տակառները,
յերբ չորանալուց պաշտպանելու համար նրանց մեջ ջուր են
լցնում ու այդպես պահում:

Այդ յերեսը ջրերից խուսափելու համար անպետք իրերը
հարկավոր ե վոչնչացնել և չթողնել վոր նրանց մեջ ջուր մնա,
իսկ տակառների ջուրը ամեն 8-10 օրը մեկ ամբողջովին փոխել:

Վերեկում մենք թվեցինք արհեստական ջրականգերի ու
ճահճացումների առաջացման մի քանի պատճառները միայն:
Նրանց թիվը շատ մեծ ե, և բոլորը թվել այստեղ հնարավոր չեն:

Բայց կարծում ենք, վոր բերած որինակներն ել բավական
են, վորպեսզի կարելի լինի պատկերացնել, թե ինչ բազմատե-
սակ ճահճացարհով են առաջանում մոծակների զարգացման տեղերը:

Ասածներից պարզ պիտի լինի նաև այն, թե ինչքան մեծ նշանակություն ունի մալարիայի գեմ պայքարելու համար ամեն մի կոլողնիկի ուշադիր վերաբերմունքը գեղի ջուրը։ Յեթե ամեն մեկը յուր առորյա աշխատանքների ընթացքում խուսափի այնպիսի քայլերից, վորոնք նոր ջրականգեր ու ճահճացումներ են առաջացնում, դրանով զգալիորեն կսահմանափակվի մալարիայի տարածումը։

ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մենք տեսանք, վոր մալարիայի տարածման, ինչպես և հիվանդությունը փոխանցող մոծակների զարգացման համար նպաստավոր պայմանները շատ բազմաթիվ ու բազմատեսակ են։ Դա յէ պատճառը, վոր մալարիան մեզ մոտ ամենատարածված հիվանդություններից մեկն է։

Բայց յեթե դա այդպես ե, հնարավմբ ե արգյոք հաջողությամբ պայքարել մալարիայի դեմ։

Մենք վճռականորեն պատասխանում ենք՝ այս, հնարավոր ե անհրաժեշտ։

Դիտությունը մշակել ե մի շարք միջոցներ վորոնց լրիվ կիրառելու դեպքում միանգամայն հնարավոր ե կանխարգելել մալարիայի զարգացումը և վերացնել նրան այնտեղ, ուր նա արդեն տարածված է։

Սակայն թե ցարական իրավակարգի և թե դաշնակների ժամանակ այդ միջոցների կիրառման մասին խոսք անզամ չըկար։ Յարական իշխանությունը նայում եր մեր յերկրին վորպես մի գաղութ, վորից զավթում եր ամեն ինչ, փոխարենը վոչինչ չտալով։ Մալարիայի լայն տարածումը նույնիսկ ձեռնտու յեր նրան, վորովհետեւ նա ավելի յեր ճնշում աշխատավորությանը, դժվարացնում նրա հեղափոխական պայքարը։ Իսկ դաշնակների ժամանակ դրությունը մալարիայի տեսակետից ավելի վատացավ։ Թալանչների ու մառւղերիստների իշխանության նախաձեռնությամբ կազմակերպված ազգամիջյան կոիվները, աշխատավորության անխնա շահագործումը, թալանը և այլն ծայրանեղ աստիճանի քայլքայեցին յերկրի տնտեսական դրությունը և պարարտ հող ստեղծեցին մալարիայի ավելի լայն տարածման համար։ Բուրժուազիայի հավատարիմ ծառաներ՝ դաշնակները

մատ-մատի չխփեցին աշխատավորության այդ թշվառ գրության վարեկ չափով ոգնելու համար։ Իրա պատճառով ել նախքան խորհրդայնացումը մալարիան ամենալայն չափերով տարածվեց մեր հանրապետության համարյա բոլոր ըրջանները և ժողովուրդը անասելի չափով տառապում եր այդ հիվանդությունից — մալարիան ամենախիստ չափով ազգում եր բնակչության աճման վրա, մահացության դեպքերն որըստորե բարձրանում եյին։

Միայն խորհրդային իշխանության հաստատվելուց հետո յեր վոր չայաստանում ստեղծվեցին հատուկ հիմնարկություններ, վորոնց հիմնական խնդիրը գարձավ մալարիայի գեմ սիստեմատիկ պայքարը։ 1923 թ. կազմակերպվեց տրոպիկական* ինստիտուտը Յերևանում, իսկ 1924 թվից սկսեց զարգանալ վարակված շրջաններում տրոպիկական կայանների ու դիսպանսերների շահանցը, վորոնց թիվը այսոր հավասար ե 30-ի։ Ամռան ամիսներին այդ ցանցը կրկնապատկվում ու յեռապատկվում ե։ Նրանց աշխատանքը մալարիայի գեմ պայքարի գործում շատ մեծ նշանակություն ունի։

Բայց իսոշոր սիսալ կլինիկ կարծել վոր միմիայն այդ հիմնարկությունների շնորհիվ ե, վոր մալարիան խիստ նահանջել ե։ Այդ գործում մեծ դեր են կատարել նաև աշխատավորության լայն մասսաները։ Յերկար տարիների վորձը ազգուցել ե, վոր ինչքան ուժեղ և ակտիվ ե մասսայի այդ աջակցությունն ու ոգնությունը, այնքան ավելի մեծ են հաջողությունները։

Խորհրդային գյուղում կատարված սացիալիստական վերակառուցումը՝ գյուղատնտեսության կոլեկտիվացումը, անհամեմատավելի հեղտացը և աշխատավորության մասնակցությունը առողջապահության գործի զարգացման մեջ։ Առավելապես այդ վերաբերում ե մալարիայի գեմ մզվող պայքարին։

Յեթե անցյալում բավական դժվար եր ցիր ու ցան յեղած մենատնտեսներին կազմակերպել մալարիայի գեմ պայքարի խնդիրների շուրջը, յեթե այն ժամանակ այդ գործում մեզ խանդակած կարում և փասում եյին նաև գյուղում նստած կուլակները, ապա այժմ — կոլեկտիվացումից հետո, այդ դժվարություններն ու խոչընդուները վերացել են։

*) Տրոպիկական են կոչվում այն հիվանդությունները, վորոնք ավելի հաճախ ու լայն տարածված են ինում շոգ կամ տաք յերկրներում։ Մալարիան պատկանում ե այդ հիվանդությունների շարքին։

Տնտեսապես ապահովված և ունեոր դարձած կոլխոզնիկը ուղղում է նաև առողջ լինել և բոլոր դեպքերում պատրաստակամությամբ և ընդառաջում գյուղն առողջացնող միջոցառումներին։ Մենք արդեն ունենք բավական թվով որինակներ, յերբ կոլխոզի ու կոլխոզնիկների շնորհիվ կիրառվել են լուրջ միջոցառումներ այս կամ այն բնակավայրը ուժեղ մալարիայից ազատելու համար։ Յեզ արդյունքները շատ շուտով համոզել են կոլխոզնիկներին, վոր նրանք չեն սխալվել։

Վորպեսզի կարելի լինի անհրաժեշտ ոժանդակությունն ու ոգնությունը ցույց տալ առողջապահական մարմիններին և առաջին հերթին արովկայաններին ու տրոպդիսպաններներին։ Հարկավոր ե ունենալ վոչ միայն բարի ցանկություն, այլ և գիտենալ թե ինչ ձեռվ ու ինչ ճանապարհով կարելի յե ցույց տալ այդ ոգնությունը։ Ուրիշ խոսքով անհրաժեշտ ե, վոր ամեն մի կոլխոզնիկ, նույնիսկ ամեն մի զպրոցական պարզ պատկերացնի ու իմանա թե ինչ միջոցներով կարելի յե պայքարել մալարիայի տարածման դեմ։

Այդ նպատակով ել մենք ստորև համառոտ կանգ կառնենք մալարիայի դեմ պայքարի միջոցների վրա։

ՊԱՅՔԱՐԻ ՃԱՆՃԱՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Մալարիայի դեմ պայքարելու համար ամենապլիսավոր, ամենաարմատական միջոցը՝ մոծակների զարգացման տեղերի վոչացնելն է։

Յերե վարե բնակավայրում ու նրա շրջակայինում վերացնենի, չորացնենի գոյուրյուն ունեցաղ նահնացումներն ու ջրականիցեր և միևնույն ժամանակ կտրակ միջոցներ ձեռք տոնենի, վար նորերը չգոյանան, այդ վայրում այլևս մալարիայի տեղական նոր դեպքեր լինել չեն կարո։

Յերբ մենք մեր առաջ խնդիր ենք դնում մալարիայից լիակատար ազատել վորեն կոլխոզ, պետք վերացնենք վոչ միայն այն ճանացումները, վորոնք գոնովում են գյուղի մեջ, այլ և նրանց, վորոնք գտնվում են գյուղի շրջակայքում։ Դա անհրաժեշտ է հետեւյալ պատճառով։ մենք գիտենք, վոր մալարիա տարածող մոծակը կարող ե թուշել և անցնել բավական յերկար

տարածություն։ Փորձերը ցույց են տվել, վոր մոծակներն իրենց զարգացման տեղից կարող են հեռանալ մինչև 2-3, իսկ յերբեմն և ավելի կիրամետը տարածություն։ Ինչքան մոտ ե շենքը ճահճից, այնքան նրա մեջ ավելի շատ մոծակներ կարելի յե գտնել, հետեւապես և ավելի մեծ և մալարիայի տարածվելու վը տանգը։

Ուրեմն գյուղի բոլոր մասերը մոծակներից ազատ պահելու համար հարկավոր ե չորացնել նաև այն բոլոր ճահճացումները, վորոնք գտնվում են մինչև 3, իսկ ավելի լավ ե, մինչև 5 կիրամետը տարածության վրա, հաշված գյուղի բոլոր ծայրամասերից։

Ճամփաները չորացնելու համար շատ ձեր են առաջարկված։ Վորպեսզի ճահճ չլինի հարկավոր ե, վոր գետինն ավելի բարձր լինի (մոտ մեկ մետր) քան ջուրը։ Այդ նպատակին հասնելու համար կամ գետնի մակերեսն են բարձրացնում, կամ ել ջուրն են իջեցնում։



Գետնի մակեր! որ բարձրացնելու համար պետք ե նրա ցածր, այսինքն ճահճացած տեղերը լցնել հողով կամ այլ նյութով։ Դա հեշտությամբ կարելի յե անել փոքր տարածություններ ունեցող ճահճացումների և ջրականգերի նկատմամբ։ Միայն հարմար դեպքերում այդ ձեռվ լցվում են ավելի մեծ ճահճները, որտեղով մեծ քանակությամբ ավազ ու տիղմ պարունակող գետի ջրով, ջուրը թողնում են ճահճացած տեղը և պահում այնտեղ այնքան ժամանակ, մինչև վոր նա պարզի։ Հետո պարզած ջուրը հեռացնում են և նորից լցնում պղտոր ջրով և այդպես շարունակում յերկար տարիների ընթացքում, մինչև վոր ճահճը լցվի տիղմով և ավազով։

Իսկ փոքր ջրականգերը լցվում են հողով, վորը վերցնում են գետնի ավելի բարձր կետերից։ Որինակ, շամարվում բավական թվով մանր ճահճացումներ վերացվել են հին ավերակ տների հողը նրանց մեջ լցնելով։

Բայց ավելի հաճախ ճահճները չորացնում են նրանց ջրի մակերեսը իջեցնելու միջոցով։ Դրա համար ամենատարածված ձեւն այն ե, յերբ հատուկ առուների միջոցով ջուրը հանում են ճահճացած տեղից և տանում թափում գետի կամ ավելի մեծ առվի մեջ, վորն ավելի ցածր և գտնվում, ուրեմն և ջուրը կարող ե ճահճից հոսել գետի այնտեղ։

Փոքր ի շատե խոշոր չորացման աշխատանքները պետք ե կատարել մասնագետ ճարտարապետների միջոցով (նկ. նկ. 8 և 9)։


Յեղած ճահիճները չորացնելու հետ միասին անպայման պետք է աշակուրջ հետեւել, վոր նորերը չգոյանան, Նոր ճահճացումներ



Նկ. 8 և 9

առաջանալու պատճառների վրա մենք արդեն կանդ ենք առել: Այստեղ մի քանի խոսք կասենք միայն բրնձի դաշտերի մասին,

վորոնք միշտ մոծակների բազմանալու համար հրաշալի տեղ են հանդիսանում (նկ. 10). Վորպեսզի մոծակները չկարողանան վնասել մարդուն, հարկավոր ե, վոր բրնձի դաշտերը դյուղերից 3 կիլոմետրից մոտ չկինեն: Այդ մասին կա հատուկ վորոշում, վորը պիտի կատարել:



Նկ. 10

Իսկ յեթե բարձրագույն որգանների թույլավությամբ բրինձը ցանվում է գյուղերից ավելի մոտ, այն ժամանակ հարկավոր ե գաշտերի վոռոգումը կատարել ընդհատվող ձևով: Առհասարակ մեզ մետ բրինձ ցանելուց հետո դաշտերի վրա ջուր են կապում և այդպես պահում մինչև բրնձի հասնելը: Իսկ ինչպես մեզ մոտ, նույնպես և ուրիշ շատ տեղերում կատարած բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր բրինձն անարդել կզարգանա և կհասունանա նաև այն ժամանակ, յերբ մենք ջրում ենք նրան ընդհատումներով, այսինքն յեթե ջուրը պահում ենք դաշտերի վրա 8-10 որ, իսկ հետո ջուրը թողնում է բրնձի դաշտը չորացնում 3-5 որվա ընթացքում: Ինչպես ցույց են տվել փորձերը, այդպիսի դաշտը տալիս ե նույն բերքը, ինչ վոր անընդհատ ջրվողը, բայց միհնույն ժամանակ աղատ ե լինում մոծակներից: Մոծակների զարգանալու պատճառը հետևյալն է, յերբ ջուրը մնում է

դաշտի վրա 8-10 որ, նրա մեջ առաջանում են մոծակների թըրթուրներ: Յեթե ջուրը մնա ևս մի քանի որ, թըրթուրներից կգոյանան հարսնյակներ, իսկ սրանցից՝ մոծակներ: Վորպեսզի խուսափեն դրանից այդ ժամանակ ջուրը հեռացնում են դաշտից, նոր ջուր չեն թողնում և դաշտը սկսում են չորանալ վորի հետեանքով մոծակի թըրթուրները վոչնչանում են: Յերբ այդ կատարվում է, կարելի յե նորից ջուր թողնել դաշտի վրա:

Անկախ այդ միջոցից ամնն մի կոլխոզում, վորտեղ բրինձ ե ցանկում, անհրաժեշտ և խիստ արգելել բրինձ ցանել տնամերձ հողամասերում, վորոնք գտնվում են գյուղի մեջ: այդպիսի ցանքները շատ ուժեղացնում են մալարիայի լայն տարածման վտանգը:

ՄՈՇԱԿՆԵՐԻ ԹՐԹՈՒՐՆԵՐԸ ՎՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մալարիայով վարակված վայրերում բոլոր ճահճացումների և ջրականգերի խսպառ վերացումը բավական խոշոր և մեծ միջոցներ ու յերկար տարիներ պահանջող աշխատանք ե: Բայց աններելի սխալ կլիներ, յեթե ընդունելով այդ, ձեռներս ծալած նստելինք և սպասելինք, յերբ կչորացվեն բոլոր ճահճները, վոր մալարիան պակասի ու վերանա:


Քանի գեռ գոյություն ունեն ճահճները, մենք պարտավոր ենք գործադրել մալարիայի գեմ պայցարիչմյուս միջոցները: Դրանց մեջ ամենազլիսավոր տեղը պատկանում է թըրթուրները վոչնչացնելու միջոցներին:

Թըրթուրները վոչնչացնելու համար առաջարկված միջոցները բավական բազմաթիվ են: Մենք կանգնանք միայն ամենատարածված ձերի վրա:

Թըրթուրներին կարելի յե վոչնչացնել զանազան թունավոր նյութերով: Դրանցից ամենալավը փարիզյան կանաչն ե: Դա մկնդեղ պարունակող մի թույն ե, վորը ջրի մեջ համարյա չի լուծվում: Գործածելու համար մի մաս թույնը լավ խառնում են 100 մաս ճանապարհի մասն մաղած փոշու հետ և ցրում ջրի յերեսին, այնպես վոր ամեն մի քառակուսի մետր տարածության վրա ընկնի 0,1 գրամ մաքուր թույն (10 գրամ խառնուրդ):


Մալարիա տարածող մոծակի թըրթուրները կուլ են տալիս ջրի յերեսին ընկած թույնի մասնիկները, թունավորվում և մի քանի ժամից հետո բոլորը վոչնչանում են (նկ. 11), ֆարիզյան

կանաչը բացի անոֆելեսի թըրթուրներից ուրիշ կենդանիներին չե վնասում:



Նկ. 11

Փարիզյան կանաչի խառնուրդը ցրում են ջրի յերեսին կամ ձեռքով, կամ թե, ավելի լավ ե, հատուկ գործիքներով: Իսկ յեթե ճահճների տարածությունը շատ մեծ ե և գրավում է հարցուրավոր և հազարավոր հեկտարներ, այդ գեղքում խառնուրդը ցրում են այդ նպատակի համար (նկ. 12) սարքված սավառնակ-



Նկ. 12

ների միջոցով: Այդ գեղքում սովորաբար խառնուրդի համար վերցնում են 1 մաս փարիզյան կանաչ ու մեկ մաս փոշի և

ամեն մի հեկտարի վրա փոշիացնում միայն 250-300 գրամ մաս-
քուր թույն (ձեռքով փոշիացնելու ժամանակ 1 կիլոյի փոխարհն):

Սավառնակի միջոցով կարելի յե վոչնչացնել թրթուրներին
նաև մեծ տարածություններ գրավող բրնձի դաշտերում:

Փարիզյան կանաչը սպանում ե միայն անոփելեսների թըր-
թուրներին, իսկ հարսնյակների վրա նա չի ազդում, վորով-
հետև նրանք չեն սնվում, հետեւապես թույնը չի կարող անցնել
նրանց ստամոքսը և թունավորել:

Թրթուրներին վոչնչացնելու մյուս տարածված միջոցը
ջրերի վրա նավթի սրսկումն ե: Նավթը ավելի թեթև ե քան
ջուրը և սրսկելուց նա բարակ շերտով տարածում ե ջրի յերեսին:

Սկզբում մենք տեսանք, վոր թրթուրները և թե հարսնյակ-
ները շնչելու համար կարիք ունեն նաև դրսի ողի: Յերբ նրանք
բարձրանում են ջրի յերեսը, վորի վրա փոխած ե նավթի շերտը,
նավթը ծածկում ե նրանց շնչառության գործարանի անցքը և
խանգարում շնչառությունը: Մյուս կողմից, այդ անցքի միջոցով
նա անցնում ե թրթուրի մարմիկ ներսը և վասառում նրան: Այդ
յերկու պատճառներից թրթուրը, ինչպես և հարսնյակը, կարճ
ժամանակում վոչնչանում ե:


Այսպիսով նավթը վոչնչացնում ե թե թրթուրներին և թե
հարսնյակներին: Բացի այդ, նա սպանում ե վոչ միայն անո-
ֆեկտների ջրային սերունդին, այլ և հասարակ մոծակներինը,
վորոնք թեկուղ և մալարիա չեն տարածում, բայց խայթում են
մարդուն, անհանգստացնում նրան: Փարիզյան կանաչը հասա-
րակ մոծակների թրթուրներին չի վսասում, վորովհետև նրանք
ջրի յերեսին պառկում են թեք, գլուխը ցած, և թույնի մասնիկ-
ները չեն ընկնում նրանց բերանը:

Ճահիճները սրսկելու համար կարելի յե գործ ածել թե սպի-
տակ և թե սև նավթ: Ավելի դժվար ե աշխատել մազութով, վոր
տալիս և հաստ շերտ, իսկ քիչ ցուրտ յեղանակին գունդ գունդ
մնում ե ջրի յերեսին ու չի ցը վում:

Մի քառակուսի մետր ճահճի վրա պետք ե սրսկել սպիտակ
նավթից 15-30 գրամ, իսկ սեվից 25-50 գրամ (նկ. 13):

Թե ճահճների փոշիացնելը և թե նավթացումը կատարվում
ե տարվա այն ամիսներին, յերբ ջրի մեջ զարգանում են թըր-
թուրները, այսինքն, գարնան վերջերից մինչև աշնան կեսերը:

Մի անգամ փոշիացնելը կամ նավթացնելը ընդմիշտ
ազատում ճահճը թըրթուրներից, ամեն 8-10-12 որ հետո հար-
կավոր ե նորից կրկնել այդ գործողությունը, վորովհետև թէ
կավոր ե նորից կրկնել այդ գործողությունը, վորովհետև թէ



Նկ. 13

Փարիզյան կանաչը և թե նավթը 1-2 որից հետո անհետանում
են ջրի յերեսից և մոծակները նորից կարողանում են ձու դնել
նրա վրա ու թրթուրներ զարգացնել:

Համեմատելով իրար հետ հարկավոր և ասել, վոր փարիզ-
յան կանաչի գործադրումը մի քանի անգամ ավելի եժան ե նըս-
տում, քան նավթինը, դրա համար ել պետք ե փարիզյան կա-
նաչը գործ ածել ավելի լայն չափերով, մանավանդ, վոր նավթի
շատ մեծ կարիք ունեն թե մեր արդյունաբերությունը և թե մե-



Նկ. 14

Քենայացված գյուղատնտեսությունը:

Թրթուրների վոչնչացման գործում խոշոր գեր և կատա-
րում գամբուզիա կոչվող ձկնիկը (նկ. 14):

Գամբուզիան մի վոքրիկ ձկնիկ ե, վորի յերկարությունը, հասունացած ժամանակ, հավասար ելինում 3-ից մինչև 5 սանտիմետրի: Երա հայրենիքը Ամերիկան ե: Այդաեղից նա բերվել ե խոտիա և հետո տարածվել շատ յերկրները: Խորհրդային Միություն բերել ե մի վրացի բժիշկ՝ Ռախիմ Շախուռեն:

Ներկայում նրան կարելի յել պատահել մեր Միության շատ մասերում՝ Միջին Ասիայում, Անդրկովկասի բոլոր հանրապետություններում, Հյուսիսային Կովկասում, Ռւկայնայում և այլն:

Հայաստանի պայմաններում այն զարդացնելը ոկզրում անհաջողության մատնվեց. ձմռան ցրտերի ժամանակ նրանք վոչնչացան, բայց սկսած 1934 թ. Տրոպիկական ինստիտուտին հաջողվեց բուծել նրանց համապատասխան բնական ճահիճներում և այժմ նրանք լայն տարածվել են Համարլվի, Վաղարշապատի, Հոկտեմբերյանի, Վեդու և մասամբ մի քանի այլ շրջաններում:

Գամբուզիան բազմանում ե վոչ թե ձու դնելու միջացով, այլ ծնում ե կենդանի ձկնիկներ, վորոնք իրենց մեծությամբ համարյա հավասար են մոծակի 4-րդ հասակի թրթուրներին: Իգական սեռի ամեն մի գամբուզիա ծնում ե 40-60 և ավելի ձկնիկներ, վորոնք լրիվ հասունանում են մեկ ամսվա ընթացքում: Այսպիսով մի քանի տասնյակ ձկնիկներից կարճ ժամանակում կարելի յել ստանալ բազմաթիվ սերունդ:

Գամբուզիան շատ զիշտափիչ ե, նա ազանորեն ուտում և մոծակների թրթուրներին և ջրի մեջ ապրող կամ զարգացող շատ միջատների ու նրանց թրթուրներին: Նույնիսկ փոքրիկ, նոր ծնված գամբուզիաները վոչնչացվում են մեծերի կողմից: Դրանից խուսափելու համար փոքրիկները բնազդորեն թագընվում են մեծերից բույսերի արանքներում կամ այլ անկյուններում, ջրի ավելի յերեսային, ափային մասերում:

Գամբուզիաներ պետք ե բուծել առաջին հերթին այն ճահիճներում ու ջրականգերում, վորոնք իրենց գոյությունը պահպանում են ամբողջ տարվա ընթացքում: Ամեն մի քառակուսի մետր ճահիճյին տարածության համար պետք ե վերցնել 4-5 գամբուզիա:

Եեթե ջուրը ազատ ե բույսերից կամ նրա մեջ բույսերը խիտ չեն աճում, ապա գամբուզիաները ընդունակ են վոչնչացնել բոլոր թրթուրներին և հարսնյակներին և թույլ չտար, վոր տեղում մոծակներ զարգանան: Բայց յեթե ջրի յերեսը պատած

ե առաջ բույսերով, այդ գեղքում թրթուրների և հարսնյակների մի մասը կարող ե թագնվել նրանց մեջ, մոծակներ տալ:

Ուստի ջրերում, ճահիճներում գամբուզիա բուծելու ժամանակ պետք է պարբերաբար մաքրել նրանց յերեսը և ազատ պահել խիտ բուսականությունից:

Գետերի ափերին զարգացող թրթուրներին կարելի յել վոչնչացնել մի շատ հեշտ ձեռվ, յեթե կոշտ ցախավելով ավելի այդ կետերի ջուրը գեպի հոսանքը, ապա թրթուրներն ու հարսնյակները մասամբ կփոխնանան ցախավելի շարժումներից, իսկ մնացածները կփչանան արագ հոսող ջրի մեջ:

Յերբ թրթուրները զարգանում են ջուրը պակասած առվի կամ գետակի հունում, այդ գեղքում հարկավոր ե ժամանակ առ ժամանակ (5-7 օրը մեկ անգամ) առաջ ջուր թողնել նրանց մեջ և հետո նորից փակել: Այդ գեղքում թրթուրները կամ վոչնչանում են առաջացող ջրապատույնների մեջ կամ ել հանվում են ափը և չորանում:

Յեթե հարավոր լիներ այս կամ այն ձեռվ վոչնչացնել թրթուրներին ու հարսնյակներին բոլոր ջրականգերում ու ճահիճներում, ապա ամենառաջը յերկու ամսից հետո այլևս վոչ մի մոծակ չեր լինի, նորերը չեյին զարգանա, իսկ յեղածները իրենք իրենց կփոչնչանային:

Դժբախտաբար այդ գեռ չի արվում և դրա շնորհիվ տարվա ամիսներին ճահճացումներից ծնունդ են առնում միինաւովոր մոծակներ, վորոնք նպաստում են մալարիայի տարածմանը:

Այդ ե պատճառը, վոր մենք չենք կարող բավականանալ միայն թրթուրները վոչնչացնելով, այլ միաժամանակ պետք է պայցբարենք նաև այն մոծակների դեմ, վորոնք զարգացել են հակաթրթուրային պայցբարից զերծ մնացած ճահիճներում:

ՄՈԾԱԿՆԵՐԸ ՎՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՄԻԶՈՅՆԵՐԸ

Ինչպես ոկզրում շեշտեցինք, մոծակները գիշերային կենացանիներ են, անոփելեսները մարդու և կենդանիների վրա յեն հարձակվում սովորաբար արևը մայր մտնելուց հետո և մինչեւ արեւի ծագելը, իսկ յերեկները նրանք թագնվում են զանազան շնոքերում, ավելի հաճախ զոմերում, կամ այլ լույսից և քամուց պաշտպանված տեղերում: Այստեղից հասկանալի յե, վոր գիշերները նրանց մասսայականորեն վոչնչացնելը շատ դժվար

ե, վորովհետև նրանք ցրված են ամեն տեղ, միշտ գտնվում են շարժման մեջ: Անհամեմատ ավելի հեշտ ե այդ անել յերեկը:

Մոծակների գետ պետք ե կովել թե ամռանը և թե ձմռանը: Չմեռ ժամանակ մոծակները շատ տեղերում արյուն չեն ծծում և առնասարակ միայն հազվագյուտ պայմաններում կարող են մեղ մոտ մալարիայով վարակել: Բայց և այնպես նրանց պետք ե վոչնչացնել նաև ձմռանը, վորպեսդի գարնանը նրանք քիչ թվով կենդանի մնան և բազմաթիվ սերունդ չափան:

Իսկ ամռանը հարկավոր ե ավելի ուժեղացնել պայքարը մոծակների գետ, վոչնչացնելով նրանց ամեն մի կետում, վորտեղ նրանք կուտակվել են զրալի քանակությամբ, վորովհետև ամառն ե, վոր նրանք կատարում են իրենց վասակար դերը:

Հիմնական կետերը, վորտեղ առաջին հերթին պիտի փշացնել մոծակներին, դա գոմերն են: Յեթե նրանք մեծ թվով հավաքվում են նաև բնակելի շենքերում, այստեղ ևս հարկավոր ե վոչնչացնել նրանց:

Մոծակներին վոչնչացնելու համար նույնական և շատ միջոցներ կան: Բայց ավելի հաճախ այդ նպատակով գործ են ածում ծծումը և ծխախոտի փոշին: Թե ծծումը և թե ծխախոտի փոշին պետք ե այրել այն շենքում, վորտեղ գտնվում են մոծակները: Ծծմը և ծխախոտի ծուխը թունավոր ե մոծակների համար և յեթե նա ուժեղ ե ու յերկար ե ազդում նրանց վրա, նրանք վոչնչանում են: Իսկ յեթե ծուխը շատ ուժեղ չե կամ կարճ ժամանակով ե ներգործում, մոծակները կարող են միայն ուշաթափվել, բայց հետո կրկին ուշքի գալ ու շարունակել իրենց կյանքը:

Գոմերը և այլ շենքերը ծծմբով ծխելու ժամանակ պետք ե վարվել հետևյալ ձևով. պետք ե լավ փակել շենքի բոլոր անցքերը, լուսամուտները, յերթիկը և այլն այնպես, վոր ներսում գտնվող մոծակները չկարողանան դուրս թռչել: Շենքից պետք ե դուրս հանել պղնձե ամանները, զունավոր շորերը, սննդամթերքները և, իհարկե, կենդանիներին: (Յեթե ծխումը կատարվում է ծխախոտի փոշու միջոցով անհրաժեշտ և հանել միայն կենդանիներին), Դա արվում է այն պատճառով, վոր ծծումը ծուխը (ավելի ճիշտ նրա միացումը թթվածնի հետ — S²) կարող է սեացնել պղնձե ամանները, ինչպես և յերկաթե իրերը, ծծվել սննդամթերքների մեջ և ազդել կտորեղնի դույնի վրա:

Շենքը պատրաստելուց հետո պետք ե չափել թե քանի-

խորանարդ մետր տարածություն ունի. Նաև ամեն մի խորանարդ մետրի համար վերցնել 10 գրամ ծծումը կամ 5-10 գրամ ծխախոտի փոշի և վառել նրան ու դուրս գալով շենքից, դուրս լավ փակել, վոր նա այլևս անցքեր չունենա:

Ծծումը կամ ծխախոտի փոշին այրելու համար նպատակահարմար է կամ նրան ածել մի կտոր չոր աթարի վրա և աթարը վառել, կամ ել ածել մի յերկաթե անոթի մեջ ու դնել պղիմուսի կամ կերպուինկայի վրա: Յերկու գեղքումն ել պետք ե զգուշանալ հրդեհից:

Դուռը փակելուց հետո պետք ե սպասել 2 կամ 3 ժամ և հետո բաց անել շենքի բոլոր անցքերը՝ լուսամուտները, գոները և այլն, վոր ներսը մաքրվի ծխից: Մի կես ժամից հետո հարկավոր ե մտնել ներս, ավելով լավ մաքրել առաստաղը, պատերը ու հատակը և հավաքված ամբողջ աղբը, կեղտը այրել կամ լցոնել փոսի մեջ ու ծածկել հողով: Դա անպայման պետք ե անել, վորովհետև մոծակների մի մասը կարող ե փչացած չլինել և հետո արթնանալ:

Կենդանիներին կարելի յե ներս բերել այն ժամանակ, յերբ ծծումը հոտը շատ թուլացել ե, այսինքն մի 4-6 ժամից հետո: Ծխախոտի փոշիով ծխելուց հետո այդ կարելի յե անել ավելի շուտ:

Մոծակները վոչնչացնելու մի այլ ձևը նրանց թակարգով բոնելն ե:

Թակարգը դրսից ամբացնում են լուսամուտին կամ յերթիկին, իսկ շենքի բոլոր անցքերն այնպես են փակում, վոր վոչ մի լույս չթափանցի ներս: Յասկիսով, յեթե շենքի դուռն ել փակվի, նրա ներսից լույս պիտի նկատվի միայն թակարգի միջով:

Յեթե շենքն այդպես սարքավորել յերեկը և դուռը փակելով թռնչել մինչև վոր մութը բոլորպին ընկնի ու հետո հանել թակարգը, նրա մեջ կարելի կլինի գտնել մեծ քանակությամբ մոծակներ: Դրանք մոծակներն են, վարոնք դուրս են յեկել սնվելու, ձռ ածելու կամ այլ նպատակի համար:

Սակայն թակարգն այլպես գործածելուց վոչ բոլոր մոծակներն են ընկնում նրա մեջ. շենքում մնում են այնպիսիները, վորոնք նոր են արյուն ծծել և զեռ ձռ ածելու պահանջ չունեն:

Վորպեսպի կարելի լինի բոնել բոլոր մոծակներին, հենց թակարգը ամբացնելուց հետո գոմի մյուս ծայրում պետք ե վառել մի կտոր աթար կամ քիչ թրջած գարման, վորպեսպի

առատ ծուխ դուրս գա և դուռը ամուր փակել: Ծուխն սկսում ե անհանգստացնել մոծակներին և նրանք աշխատում են դուրս գալ շենքից ու այդ նպատակով թռչում են դեպի լույսը, այսինքն դեպի թակարդը և ընկնում նրա մեջ: Իսկ թակարդը ընկած մոռակներին սպանում են ծծմբի ծխով կամ այլ ձեռվ:

Թակարդով մոծակներին բռնելու համար պահանջվում է ամենաշատը 1-2 ժամ, այսինքն 3-4 անգամ ավելի քիչ ժամանակ քան ծծումը գործազրելիս: Բացի այդ նա վոչ մի վսաս չի հասցնում զանազան իրերի, իսկ ծուխը դուրս ե գալիս գոմից մի 10-20 րոպեյում: Այդ պատճառով ել հարկավոր ե ավելի լայնորեն գործածել թակարդը, առավելապես աշնան և գարնան ծխումների ժամանակ, յերբ կենդանիներին յերկար ժամերով դրսում պահելը հնարավոր չե: Սրան ավելացնենք և այն, վոր թակարդ գործածելու դեպքում ծծումը չենք ծախսում, վորը բավական արժեքավոր նյութ ե և անհրաժեշտ ե շատ ուրիշ նըսպատակների համար:

Մալարիայի դեմ հաջող պայքարի համար նշանակություն ունի ամեն մի մոծակի վոչնչացնելը, ուստի պետք ե աշխատել այդ բանն անել ամեն տեղ, ուր դա հնարավոր ե: Առավելապես ուշադրությամբ պետք ե փնտռել և վոչնչացնել այն մոծակներին, վորոնք մտել են բնակելի սենյակները, շենքերը: Այդ բանը կարելի յե անել խիելով նրանց հենց ձեռքով կամ վորեն շորով, յերբ նրանք նստած են պատին կամ այլ տեղ: Շենքում գտնվող մի քանի մոծակներից մեկը կամ մյուսը կարող ե վարակված լինել և նրանց սպանելը կկանխի վարակի տարածման վտանգը:

ՄՈԾԱԿՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մոծակները վոչնչացնելն անշուշտ դրական արդյունք ե տալիս, բայց վերսիշյալ մոծակների ամենալայն կիրառումով հնարավոր չե վերացնել բոլոր մոծակներին: Մոծակների մի մասը մնում է դուրսը, թագնվում խոտերի մեջ, հորերում, ծառերի փշակներում և այլն: Վոչնչացնել նրանց այդ բոլոր կետերում հնարավոր չե: Այդ պատճառով ել, յեթե դեռ գոյություն ունեն մոծակների զարգացման տեղեր՝ ճահճացումներ, անհրաժեշտ ե դիմել նաև մոծակներից պաշտպանվելու միջոցներին:

Այդ նպատակով ավելի հաճախ դիմում են յերկու միջոցի՝ շենքերի լուսամուտների ու դռների ցանցապատման և քնելու ժամանակ հատուկ ծածկոցների՝ մժեղարգելների (մրչակտամ, պղող) գործածման:

Ցանցապատման համար գործադրվող ցանցը պետք ե ունենա այնքան փոքր ծակուիներ, վոր նրանցով մոծակը չկարողանա անցնել: Այդ պահանջներին բավարարում ե այն ցանցը, վորը մի սանտիմետրի վրա ունի 6-ից վոչ պակաս անցը: Ցանցը պետք ե լինի մետաղից, ավելի լավ ե պղնձից կամ ցինկով պատած յերկաթից, վորպեսզի շատ չժանդառի: Ցանցն անմիջապես լուսամուտին չպետք ե ամրացնել, այլ առաջ հարկավոր ե պատրաստել պատռհանի չափով հատուկ շրջանակ, նրա վրա լավ ամրացնել ցանցը և ապա շրջանակը շենքի դրսի կրղմից միացնել պատռհանին այնպես, վոր վոչ մի անցը կամ ճեղք չմնա: Լրացուցիչ շրջանակը հարկավոր ե նրա համար, վորպեսզի աշնանը ցրտերն սկսելուց հետո, յերբ դրսում արդեն մոծակները չեն լինում, կարելի լինի ցանցը շրջանակի հետ հանել և պահել մինչև մյուս տարբա տաք յեղանակները: Ցանցը պետք ե պահել չոր տեղ և նրան մի քիչ ձեթ քսել վոր չժանդառի:

Յեթե ցանցի պակասություն չե զգացվում, լավ ե ցանցապատել բոլոր լուսամուտները, իսկ յեթե ցանց քիչ կամ կարելի յե ցանցապատել միայն նրանց մի մասը, որինակ յեթե սենյակն ունի չորս լուսամուտ, բավական ե, վոր ցանցապատվի 2-ը կամ 3-ը, բայց այնպես, վոր ցանցապատված լուսամուտները միանույն պատի վրա լինեն (յեթե լուսամուտները տարբեր պատերի վրա յեն): Զցանցապատած լուսամուտներն ամառվա ընթացքում, առավելապես մութն ընկնելուց հետո, չպետք ե բանալ:

Միայն լուսամուտները ցանցապատելով դեռ չի կարելի շենքը աղատ համարել մոծակներից, վորոնք կարող են ներս մտնել դռներից: Ուստի հարկավոր ե խանգարել նրանց մուտքը նաև դռներից: Դրա համար շենքից դուրս տանող դրսի կողմից պետք ե կառուցել մի փոքրիկ նախասենյակ, վորի պատերը և դուռը նույնպես պատած լինեն ցանցով: Վորպեսզի այդ նախասենյակի (տամբուրի) և թե շենքի հիմնական դուրսը, ամառ ժամանակ, արել մայր մտնելուց մինչև առավոտ, միշտ փակ պահպի, այդ դռները պետք ե ունենան զսպանակներ, վորոնք

ամեն անգամ մեխանիկորեն փակում և դուռը յերբ ներս մըտնողը կամ դուրս յեկողը բաց և անում նրան:

Յանցապատած նախասենյալը (տամբուրը) պիտի ունենա 1-1 $\frac{1}{2}$ մետր լայնություն ու յերկարություն, վորպեսզի յերկու մարդ նրա մեջ իրար պատահելուց կարողանան ազատ շարժվել:

Յեթե տամբուրը կառուցվի, բայց դաները բաց պահվեն, նա վոչ մի նշանակություն չի ունենա:

Յանցապատման միջոցով կարելի յե արգելել կամ խիստ սահմանափակել մոծակների մուտքը դեպի սենյակները: Բայց ամառվա ընթացքում շատ հաճախ շողը ստիպում է մարդկանց թողնել շենքը և գիշերը դուրսը քնել: Այս դեպքում մոծակներից պատշաճանվելու համար պետք է դիմել ծածկոցներին, մժեղարգելներին, (մըշակտամ, պոլոգ): Նա պատրաստվում է կամ թանգիից (մառլա) կամ ել տյուլ կոչվող կտորից:

Ծածկոցները տարբեր ձեր յեն լինում, բայց ավելի նպաստականարմար ե արկղի ձեր ծածկոցը:

Ծածկոցների յերկարությունն ու լայնությունը պետք է համապատասխանի այն մահաճակալին, վորի վրա քնում և մարդը: Սովորաբար ծածկոցները պատրաստվում են հետեւյալ չափերի, յերկարությունը 2 մետր 10 սանտիմետր, լայնությունը — 1 մետր 10 սանտիմետր իսկ բարձրությունը՝ 1 մետր 5 սանտիմետր:

Ծածկոցից դրական արդյունք ստանալու համար մեծ նըշշանակություն ունի նրա գործածելու ձեւը: Ծածկոցը կարելի յե կախել անկողնու վրա յերկու ձեռվայրերը մահակալը սենյակումն ե, ապա ծածկոցի չորս ծայրից կապում են բարակ կամ հաստ, ամուր թել և նրանց ծայրերը կապում պատերի համապատասխան կետերում խփած մեխերին: Ինարկե, այդ պետք է անել այնպես, վոր ծածկոցը կախված լինի ուղիղ մահակալի վրա:

Իսկ յեթե մարդ դուրսն ե քնում, այդ դեպքում ամեն անգամ հետարափոր չի լինում այդ ձեռվայրել ծածկոցը: Այսաեղ հարկափոր ե վարփել հետեւյալ կերպ. պետք է պատրաստել մեկ և կես մետր յերկարություն ունեցող բարակ փայտեր կամ տախտակի կտորներ և ամրացնել նրանց մահակալի ամեն մի անկյունին այնպես, վոր նրանք ուղղահայաց ձեռվայրել գցված լինեն դեպի վեր: Նրանց ծայրին խփում են մեկ-մեկ փոքրիկ մեխ, իսկ ծածկոցի անկյուններին կարում փոքրիկ ողակներ կամ մի կտոր ամուր թել: Հետո այդ ողերից ամեն մեկը հազցնում են

փայտի ծայրին խփած մեխին և այդպիսով ծածկոցը կախում են մահակալավ վրա:

Յերեխմն մահակալին փայտեր ամրացնում են, բայց հետո ամբողջ ծածկոցը հազցնում նրանց վրա: Դա միանգամայն սխալ ե, այդ ձեռվայրել կախած ծածկոցը չի կարող լրիվ կատարել յուր զերը: Անհրաժեշտ ե, վոր բոլոր չորս փայտն ել մնան ծածկոցից դուրս և ամրացած լինեն նրա չորս անկյուններին:

Քնելու ժամանակ նախ հարկափոր ե ծածկոցի 3 կողմերն անց կացնել ներքնակի տակ և ազատ թողնել միայն այն կողմը, վորաբեղից մարդ անկողին ե մտնելու: Յերբ նա արդեն պառկել ե, այդ ժամանակ ներքնակի տակն ե մացվում նաև չորրորդ կողը: Այսպիսով ծածկոցը լրիվ առանձնացնում է մարդուն և ծառայում նրա համար վորպես թանգիփե մի փոքրիկ սենյակ: Յեթե պահպանված են վերոհիշյալ բոլոր պահանջները, վոչ մի մոծակ չի կարող մոտենալ մարդուն և խայթել նրան:

Պետք ե ասել, վոր դժբախտաբար վոչ բոլորն են կատարում այդ պահանջները: Յերեխմն ծածկոցն ստանում են և գործածելու փոխարեն պահում են արկղում, իսկ վոմանք նույնիսկ քանդում են և գործ են ածում այլ նպատակների համար: Դա իշարկե, գիտակից մարդու քայլ չի կարելի համարել:

Այլի հաճախ մենք պատահել ենք ծածկոցների սխալ ողտագործելուն, ծածկոցը կապում են մահակալի վրա, բայց նրա ծայրերը ներքնակի տակ չեն կոխում, իսկ մոծակները հեշտությամբ մտնում են նրա տակը և խալթում մարդուն:


Մժեղարգելների, (պոլոգների, ծածկոցների) ծայրերը պետք են ներքնակի տակ մտցրած պահել վոչ միայն պառկելու ժամանակ, այլ և ցերեկը, վորպեսզի մոծակները չկարողանան նրա տակը մտնել:

Մոծակներից մարդուն կարող են պաշտպանել նաև բարձր աշտարակները («քյաթիլները»): Բայց վորպեսզի նրանք կարողանան այդ գերը կատարել, նրանց բարձրությունը 20 մետրից պակաս չպիտի լինի: Մինչդեռ մեզ մոտ գյուղերում կառուցվաղ աշտարակները ունենում են միմիայն 4-5 մետր բարձրություն: Այդպիսի կառուցվածքները չեն կարող մոծակներից պաշտպանել, քանի վոր մոծակները առանց դժվարության կարողանում են այդքան բարձրանալ և խայթել մարդուն:

Իսկ վորովհեակ բարձր աշտարակներ կառուցելու համար

հարկավոր ե բավականաչափ շինանյութ և զգալի ծախս, ուստի
նա մասսայական տարածում ունենալ չի կարող:

Ծածկոցը, ինչպես ցանցապատված սենյակը, պաշտպանում
ե մարդուն քնած կամ սենյակում նստած ժամանակ: Բայց շատ
գեղքերում մարդ ստիպված է լինում աշխատանք կատարել նաև
գիշերը (պահակներ և այլն): Նման աշխատավորներին՝ մոծակ-
գիշերը



նկ. 15

ներից պաշտպանելու համար հարկավոր ե ծածկել մարմնի բաց
մասերը, հազնել յերկարավիղ կոշիկներ, հաստ ձեռնոցներ, իսկ
գլխին հագնել մետաղյա ցանցից կամ ծակոտիներ ունեցող
կտորից ծածկոց, վորը նման է մեղվարույների կողմից գործած-
վող ցանցին: Իհարկե, այդ ցանցի ծածկոցը պետք է ամեն կող-
մից փակված լինի և չդիպչի յերեսին կամ վզին, վոր մոծակ-
ները չկարողանան նրա վրայով խայթել մարդուն:

Այդ զգեստը մի քիչ դժվարացնում է մարդու շարժումները,
շողը նեղում են նրան, բայց դա լինում է միայն սկզբում, իսկ
հետո մարդ ընտելանում է:

Բազմաթիվ փորձերը ցույց են տալիս, վոր այն մարդկանց

մեջ, վորոնք կանոնավոր ոգտվում են ծածկոցներից (պոլոզնե-
րից) և մոծակներից պաշտպանվելու մյուս միջոցներից, անհա-
մեմատ ավելի քիչ են լինում մալարիայով վարակման դեպքերը,
քան չպաշտպանված մարդկանց մեջ:

ՊԱՅՔԱՐԻ ՄՅՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Յեթե վերելում թված հակամալարիային միջոցառումները
կիրավին կանոնավոր և լրիվ կերպով, այդ դեպքում մալարիան
այլևս տարածվել չի կարող, նա կուռնա հազվադյուս հիվան-
դություններից մեկը: Բայց ցափոք սրտի, իրականության մեջ
մենք այդ լրիվ չունենք: Այդ պատճառով ել հաճախ մենք ստիպ-
ված ենք լինում դիմել նաև մի շաբթ այնպիսի միջոցների,
վորոնց ժամանակ դործ են ածվում գանգան գեղանյութեր
(խինին և ուրիշները):

Հայտնի յե, վոր յեթե գարնան վերջերից մինչև ձմռան
սկիզբը միշտ խինին կամ այլ հատուկ գեղ ընդունեն, շատ
գեղքերում կարելի յե խուսափել մալարիայով հիվանդանալուց:
Բայց կարելի յե արդյոք մալարիայով վարակված բոլոր բնակա-
վայրերում ամբողջ բնակչության մեջ անցկացնել այդ միջոցը:
Գտնում ենք, վոր վոչ: Հենց մեր հանրապետության սահման-
ներում մալարիայով վարակված վայրերում ապրում ե 3-4 հար-
յուր հազար մարդ: Ամեն մեկին ամառվա և աշնան ընթացքում,
միջին թվով, պետք ե տալ առնվազն 50 գրամ խինին: Ռերեմն
այդքան մարդու համար հարկավոր ե 15-20 տոնն (900-1200
փութ) խինին: Միայն այդ խինինը բաժանելու համար 5-6 ամբու-
վա ընթացքում պետք ե անընդհատ աշխատեն 1500-2000
խինիդատոր (խինին բաժանող): Միայն այդքան խինինի համար
հարկավոր ե ծախսել մոտ մեկ միջին ուռելի վսկզբ: Յեվ այդ
ծախսը հարկավոր ե կատարել ամեն տարի:

Յեթե վորեմ մեկը առաջարկեր այդ անել, նրան կարելի
յեր վնասաբար համարել, վորովհետեւ յեթե այդ գումարի կեսից
պակասը ծախսենք մեր ճահճճները չորացնելու վրա, այդ ժա-
մանակ մալարիան ընդմիշտ կվերանա մեր յերկթից:

Բայց այդ, ամռանը, աշխատանքների ամենայնուն
շրջանում շատ դժվար ե, յեթե չառենք անհնարին, 2 հազար
մարդ զրադեցնել զեղ բաժանելու դործով:

Ավելացնենք նաև այն, վոր խինինը ոգտակար ե միայն

հիվանդ մարդու համար, իսկ առողջի նկատմամբ նա անտարքեր չե, նա այս կամ այն չափով բացասական ազդեցություն է գործում նրա սրգանիզմի վրա:

Ճիշտ ե, վերջին տարիների ընթացքում մեղ մոտ սկսել են արտադրել մի ուրիշ գեղ — ակրիսինին, վորը խինինից պակաս չե, և վորի համար վոսկի վճարել չի հարկավոր, բայց սա ել արժեքով շատ եժան չե և նրա վրա ծախսած գումարներով ևս կարելի յե ճահիճների մեծ տարածություններ չորացնել:

Այս ե պատճառը, վոր մալարիայի գեմ պայքարի ընթացքում միայն բացառիկ զեպքերում են դիմում այդ միջոցին, այսինքն հիվանդանալուց պահպանելու նպատակով լայն մասսաների մեջ ամբողջ ամառվա և աշնան ընթացքում խինին կամ ակրիսինին բաժանելուն:

Այդ բանը կատարվում ե միայն այն դեպքերում, յերբ ուրիշ վոչ միջոցով հնարավոր չի պաշտպանել աշխատավորությունը մալարիայից, այսինքն յերբ չի տարվում պայքար ճահիճների, թթուրների ու մոծակների գեմ, չեն գործադրվում մոծակներից պաշտպանվելու միջոցները:

Ինարկե, ավելի նպատակահարմար ե և միջոցների տեսակետից ձեռնառու, լայն գործադրել հենց վերջում թված ձերը, վորպեսզի հետո ստիպված չլինենք դիմելու դեղորայքի բաժանմանը:

Յեթե մալարիայով բռնկված վայրում վոչ մի միջոց ձեռք չի առնվում, արդյունքը լինում ե այն, վոր բնակչությունը ամբողջովին վարակվում ե և շատերը հիվանդանում են մալարիայով:

Յերեք չպետք ե մոռանալ, վոր մալարիայով հիվանդը վոչ միայն ինքն ե տուժում, այլ մեծ չափով վտանգավոր և դառնում նաև շրջապատողների համար, նրանից են վարակվում մոծակները և հետո վարակում առողջներին: Ուստի անհրաժեշտ ե, վորպեսզի թե ինքը՝ հիվանդը և թե նրան շրջապատողներն ամեն կերպ աշխատեն կանոնավոր տանել բժշկությունը, վոր հիվանդի արյան մեջ մալարիայի պարագիտներ չդանվեն:

Յեթե նախապատերազմյան շրջանում, ինչպես և դաշնակների ժամանակ հիվանդներին բուժելու համար խինինը շատ դժվարությամբ եր գտնվում կամ բոլորովին չեր լինում, այսոր թե իրինն ու ակրիսինինը և թե այլ հարկավոր զեղերն անհրաժեշտ քանակությամբ կան ամեն մի բժշկական կամ բու-

ժական կայանում, վորոնց ցանցը անցյալի հետ համեմատած աճել ե մի քանի տասնյակ անգամ:

Մենք գիտենք, վոր մալարիայով վարակված հիվանդը սովորաբար տարեկան մի քանի անգամ նորից գողացնում ե և մի քանի որից կամ շարաթից հետո «առողջանում», մինչև վոր մի քանի ժամանակից հետո նորից հիվանդանա և այլն: Դրա պատճառն այն ե, վոր հիվանդանալիս նա լավ չի բուժվում և յերբ դեղորայքը վերջանում ե, նա գագարում ե բուժվելուց: Իսկ յեթե մալարիայի պարագիտը մնում ե մարմնի մեջ, նա սովորությունը ունի ժամանակ առ ժամանակ հիշեցնել յուր գոյության մասին, առաջ բերել նոպաներ: Մալարիայի այդպիսի կրկնությունները ունեցիդիվներ են կոչվում:

Ուցիդիվներն ավելի հաճախ պատահում են գարնան վերջերին և հետո՝ աշնանը: Փորձերը ցույց են տվել, վոր յեթե ուցիդիվների ժամանակը գալուց առաջ, որինակ, վաղ գարնանը խրոնիկական մալարիա ունեցողները կարծ ժամանակով բուժման յենթարկվեն, ապա հետագայում նրանց միայն մի փոքր մասը ուցիդիվ կունենա, իսկ մնացածները հիվանդության կրկնություն չեն ունենա:

Դրա հիման վրա ել խիստ վարակված բնակավայրերում, թե մեծերին և թե զպրցական հասակի ու ավելի փոքր յերեխաներին յենթարկում են քննության և հետո բուժում նրանց, ովքեր, ցույց են տալիս հիվանդության նշաններ: Այդպիսի քըննություն և բուժում կատարվում ե առհասարակ գալնանը, բայց յեթե սպասվում ե կամ արդեն զարգացել ե մալարիայի եղիշեմիա (համաձարակ) — կարելի յի անցկացնել նաև ամռանը:

ԽՆՉԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՆԵՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾՈՒՄ

Մալարիայի գեմ ոլայքարը զեկավարվում ե տարվում և մեղ մոտ հատկապես այդ նպատակի համար կազմակերպված արուպիկական կայանների, տրոպիկական դիսպանսերների և միշտ այլ հակամալարիային, առողջապահական հաստատությունների կողմից: Այդ հիմնարկները զիտական զեկավարությունն

ստանում են Յերեվանի տրոպիկական ինստիտուտից, իսկ ընդհանուրը — Առժողկոմատից և առբաժիններից:

Ամեն մի տրոպիկական (հակամալարիային) հիմնարկ ունի իրեն կցած գյուղերը, վորոնց վերաբերյալ պարտավոր և անցկացնել յուր ծրագրով նախատեսված հակամալարիային միջոցառումները: Երանց պլանները քննվում և հաստատվում են Առժողկոմատի կողմից:

Մալարիայոտ շրջաններում գտնվող յուրաքանչյուր կոլիսող պետք ե մշտական կապ ունենա այն տրոպիկայանի կամ տրոպագիսպաների հետ, վորի սպասարկման շրջանում և նա գտնվում: Նրա ողնությամբ միայն կոլիսող կարող և կազմել մալարիայի գեմ արթելիք աշխատանքների ծրագրը: Իսկ այդպիսի ծրագրը կարելի կլինի կազմել այն ժամանակ, յերբ տրոպիկամերկ տվյալ վայրում արդեն կատարել ե անհրաժեշտ հետազոտություններ: Յեթե գետ այդպիսի հետազոտություն չի կատարվել, կոլիսողի վարչությունը պետք ե պահանջի անցկացնել այդ, անհրաժեշտ գեպքում դիմելով առբաժնին, իսկ յեթե դա ել չի ոգնի, — Առժողկոմատին:

Հետազոտության նպատակն ե պարզել, թե ինչ չափով և տարածվում մալարիան տվյալ վայրերում, վորակ են զարգանում մոծակները, ինչ պատճառից են առաջանում այն ջրականգերը, վորոնց մեջ բազմանում են մոծակները, և ինչ ձանապահներով կարելի յե վերացնել կամ անվտանգ դարձնել նրանց և այլն:

Միայն այդ հարցերը լրիվ պարզելուց հետո հնարավոր ե լինում կազմել կոնկրետ, տվյալ բնակավայրի պայմաններին համապատասխանող պայքարի ծրագրի: Մյուս կողմից ծրագրը կարող ե դրական արդյունք տալ յեթե նրա իրագործելու համար կան անհրաժեշտ նյութական միջոցներ, իս զեկավարող և կատարող:

Վորմանք կարծում են, վոր քանի հարցը վերաբերում և առողջապահական խնդիրներին, ուրեմն ամբողջ ծախսը պիտի կատարի Առժողկոմատը կամ առբաժինը: Դա միանգամայն սխալ է: Մենք գետ ոկղություն շեշտեցինք, վոր մալարիան հաղթաբերու համար բավական չե, վոր աշխատեն միայն բժիշկները և նրանց ոգնականները, ինչպես և բավական չե, վոր միայն ոգտագործվեն այն միջոցները, վորոնք բաց են թողնվում առողջապահության գծով: Միաժամանակ անհրաժեշտ ե, վոր

այդ գործում լինի կոլիսողի ու կոլիսողնիների լայն աջակցությունը և հատուկ միջոցներ հատկացվեն կոլիսողների կողմից:

Առողջապահական հիմնարկների բյուջեյով մալարիայի գեմ պայքարելու համար միայն Հայկական ԽՍՀ-ում ծախովում և տարեկան մի քանի միլիոն ոռուբլի: Մեր մյուս Խորհրդային հանքապետություններում այդ նպատակի համար խոշոր միջոցներ են հատկացնում նաև շահագրգոված հիմնարկները, սովորողներն ու կոլիսողները: Մեզ մոտ այդ գործը գեռ բավարար դրության մեջ չե: Մեզ մոտ շատ տեղերում շահագրգոված որգանները, նրանց թվում նաև շատ կոլիսողները, գեռ չեն գիտակցել թե մալարիայի հասցրած վնասը և թե նրա գեմ պայքարելու անհրաժեշտությունը, և այդ պատճառով ելք թույլ են ոդնում կամ բոլորովին չեն ոպնում առողջապահական մարմիններին այդ պայքարում:

Այդպիսի վերաբերմունքը անպայման պետք ե վերանա: Ամեն մի կոլիսողի վր պարտքը պիտի համարի, վորքան հնարավոր ե, շատ ոգնել մալարիան վոչնչացնելու և վերացնելու գործում: Զպետք ե սպասել, վոր մալարիան լայն տարածվի ու քայքայի կոլիսող աշխատանքները և այն ժամանակ պատրաստակամություն հայտնել ոժանդակելու նրա գեմ ուայքարելու գործին, այլ պետք ե ամեն ինչ անել, գեռ համեմատարար իառզարդ գործին, այլ պետք ե ամեն ինչ անել, գեռ համեմատարար իառզարդ գործին (համաձարակ) չառաջանա: զաղ ժամանակ, վոր հետո հելիդեմիա (համաձարակ) չառաջանա:

Իսկ վորպեսզի կոլիսողի մասնակցությունը պատահական չլինի, այլ ունենա պլանային բնույթ, անպայման հարկավոր ե, վոր անելիքների մասին նշված լինի կոլիսողի արտադրական ֆինանսական պլանի մեջ և նույն պլանում նախատեսված լինեն այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ գումարներ:

Իհարկե, նախարար անհրաժեշտ ե կոլիսողի լայն ժողովում լսել տրուկիմնարկի բժշկի զեկուցումը նրանց անելիքների մասին, կոնկրետ պլանի մասին:

Ինչպես կոլիսողում տարվող աշխատանքների յուրաքանչյուրի համար, այնպես և մալարիայի գեմ պայքարը ժամանակին ու լրիվ իրագործելու համար պետք ե լինի պատասխանատու անձ — կոլիսողի վարչության անդամներից մեկը:

Գործի հաջողության համար հոկայական նշանակություն ունի այն խնդիրը, թե ով պիտի կյանքում իրագործի կոլիսողի պլանով նախատեսած հակամալարիային աշխատանքները: Հաճախ ե պատահում, վոր կազմված պլանը ընդուրվում ե բոլոր իրներները, բայց իրականության մեջ վոչ մի բան չի արվում,

վորովհետև չկա մեկը, վոր ի կատար ածի նախատեսված միջուցառությունները, տրոպհիմնարկների արած առաջադրանքները:

Վորպեսզի նման գրություն չստեղծվի, հարկավոր ե, վոր ամեն մի կոլխող ունենա մեկ, իսկ յեթե անհրաժեշտ ե (յեթե կոլխողը շատ մեծ ե և աշխատանքները շատ) յերկու կամ ավելի բանիֆիկատօր:

ԲՈՆԻՖԻԿԱՏՈՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Բոնիֆիկատոր բառը իտալերենից ե վերցված և նշանակում է լավացնող, բարվոքող: Նրա հիմնական պարտականությունն է լավացնել, բարվոքել շրջապատի պայմանները այնպես, վոր մալարիան չկարողանա տարածել: Նա յուր աշխատանքի ընթացքում կիրառում ե այն բոլոր միջոցառությունները, վորոնց մենք թվեցինք նախորդ գլխում:

Բոնիֆիկատորը անպայման պետք ե ունենա մասնագիտական պատրաստություն, վորը նա ստանում է տրոպկայանների կից կազմակերպող 2-3—ամսյա կուրսերում: Իսկ վորպեսզի նա կարողանա հասկանալ և յուրացնել այդ կուրսերում դասավանդվող առարկաները, հարկավոր ե, վոր նա ունենա առնվազն 7-նամյակի կրթություն:

Նրա աշխատանքը պահանջում է նաև Փիզիկական ուժ, ուրեմն չի կարելի այդ գործը տանելու համար ընտրել թուլակազմ կամ վորևե Փիզիկական արատ ունեցող մարդու: Ավելի նպատակահարմար ե, վոր բոնիֆիկատորը լինի տղամարդ, բայց գործը հաջողությամբ կամ նաև կապահանելու համար:

Բոնիֆիկատոր նշանակելու խնդրում կոլխողնիկներից շատերը գեռ միանգամայն սխալ մոտեցում ունեն: Շատ կոլխողների նախագահներ կամ նրանց վարչություններն առհասարակ հրաժարվում են կոլխողից բոնիֆիկատոր տալ: Դա կարելի յերգացարել մի կողմից նրանով, վոր առողջապահական որգանները և առաջին հերթին արովկայանի բժիշկը չի կարողացնել լավ պարզաբանել ու բացատրել բոնիֆիկատորի անելիքները, նրա պարտականությունները, և կոլխողի վարչության համար գեռ անհասկանալի յե մնացել նրա գերը: Մյուս կողմից, պատահում ե յերենն հետևյալը. կոլխողն անցյալում բոնիֆիկատոր ունեցել ե, բայց վորովհետև առողջապահական որգանների կողմից դեկավարություն չը ստացել, նա գրա հետեանքով մատնվել ե ան-

գործության և տապալել աշխատանքները: Այդ պատճառով ել կոլխողի վարչությունը չի ցանկանում նոր բոնիֆիկատոր հատկացնել: Դա ևս սխալ մոտեցում ե, թերությունը պետք եռողիքել, պետք միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բոնիֆիկատորը մշտական և կոնկրետ դեկավարություն ունենա տրոպհիմնարկի կողմից և վոչ թե հրաժարվել նրան պահելուց և այդպիսով վատացնել գրությունը:

Յերբեմն կոլխողների վարչությունները բոնիֆիկատոր չեն տալիս այն պատճառով, վոր վերջին մեկ կամ յերկու տարբեների ընթացքում զյուղում մալարիան ուժեղ տարածված չի յեղել: Նրանք մոռանում են, վոր յեթե մալարիայի դեմ անընդհատ պայքար չի տարվում, ապա նա շուտով անպայման նորից գլուխ կրաքացնի, և այդ ժամանակ բոնիված եպիզեմիան հանգցնելու համար ավելի շատ աշխատանք ու միջոցներ կպահանջվի: Նրանք մոռանում են, վոր մալարիայի եպիզեմիան մի տարվաընթացքում կոլխողից խլում ե անհամեմատ ավելի շատ բարիքներ, միջոցներ, քան հարկավոր ե 5-10 տարվա ընթացքում մեկ բոնիֆիկատոր պահելու համար: Բոնիֆիկատորը միայն մալարիայի ուժեղ տարածման ժամանակ չե, վոր պիտի աշխատի այլ և խաղաղ տարիներին, հենց նրա համար, վոր մալարիայի բոնկում չլինի:

Ուրիշ գեպքերում, յերբ կոլխողը համաձայնվում է տալ բոնիֆիկատոր, վորոշ տեղերում նկատվում ե մի ուրիշ սխալ: Կոլխողի նախագահն այդ աշխատանքին և զնում մի թուլակազմ կամ թե աշխատանքից խուսափող, ծույլ մարդու, վորն աշխատանքի ուրիշ ճյուղերում ցույց ե տվել յուր անընդունակ լինելը կամ բացարձակ անպետքությունը:

Դա ևս անթույլատերելի յե, այդպիսի բոնիֆիկատորը, վորից լավ բան սպասել չի կարելի, կտապալի աշխատանքները և զբանական քով մալարիան կուժեղանա ու խոշոր վնաս կհասցնի կոլխողին:

Բոնիֆիկատոր նշանակելու համար հարկավոր ե ընտրել բարեխողճ, աշխատանք սիրող և Փիզիկապես ուժեղ մարդ: Միայն այդպիսի աշխատողը կարող ե լրիմ ապահովել հակամարտականութիւն աշխատանքների լրիմ և լավ վորպեսզի կատարելը: Նրա մի տարվա աշխատանքը կոլխողի համար կանոնակարգություն ուղերձ գործություն առաջին որեւէ, վորոնք կորչում են մալարիայի ուժեղ զարգացման ժամանակ:

Բոնիֆիկատորի աշխատանքը շատ պատվավոր եւ կ խոշոր նշանակություն ունի կոլխոզի համար և այդ գործը պետք է հանձնաբարել արժանի մարդու:

Ինարկե, այդպիսի կոլխոզնիկն յուր աշխատանքի համար պետք է ստանա համապատասխան վարձատրություն: Անա այստեղ եւ, վոր տեղի յեն ունենում բազմաթիվ թյուրիմացություններ, վորոնք լքում են առաջ բերում հակամալարիային աշխատանքներում:

Շատ տեղերում կոլխոզների նախագահները ծայրահեղ ժլատություն են ցուցաբերում այս խնդրում: Մենք շատ գեպքեր գիտենք, յերբ բոնիֆիկատորին առաջարկել են 8-10-12 աշխատանքային որ: Յեթե մենք պահանջում ենք, վոր բոնիֆիկատոր նշանակվի աշխատանքը, լավ գրագիտ ու բարեխիղմ կոլխոզնիկը, ապա հարց եւ ծագում, թե համաձայնի՞ արդյոք այդպիսի կոլխոզնիկը թողնել դաշտային աշխատանքը, վորտեղ նա ամսական վաստակում ե 30-40 և ավելի աշխատ և դառնալ բոնիֆիկատոր, վորպեսզի ստանա 8-12 աշխոր: Ինարկե վոչ: Այդքան աշխատ համաձայնվեն ստանալ միայն նրանք, վորոնք խուսափում են աշխատանքից և բոնիֆիկատորի պաշտոնին նայում են վորպես մի միջոցի, վորը կծածկի, կթագցնի նրանց ծուլությունը, անզործությունը, իսկ հետևանքը կինի մալարիայի տարածումը:

Ուրեմն պարզ ե, վոր բոնիֆիկատորին պետք եւ աշխատերով ապահովել այնպես, վոր նա շահագրգուփած լինի մնալ այդ աշխատանքի մեջ:

Ինչպես կանոննենք ներքեռում, բոնիֆիկատորն աշխատանք ունի վոչ թե միայն ամռանը, այլ ամբողջ տարին: Դրա համար ել նա պետք եւ ապահովված լինի աշխորով ամբողջ տարվա ընթացքում:

Մալարիայով վտանգված բոլոր կոլխոզներում միշտ նույն քանակի ու աեսակի աշխատանք չի պահանջվում: Վորքան շատ ե, որինակ շրջապատող ճահճացումների տարածությունը, վորքան բազմաթիվ են ծխելու յենթակա գոմերը և այն, այնքան ավելի շատ են տվյալ կոլխոզի բոնիֆիկատորի աշխատանքները: Ուստի չի կարելի, ինարկե, պահանջել, վոր բոլոր կոլխոզներում բոնիֆիկատորները ստանան նույն թվով աշխորեք: Ինչքան շատ ե ծանրաբենված նա, այնքան ավելի շատ աշխոր պիտի ստանա: Բայց միջին մեծության կոլխոզում բոնիֆիկատորի աշխորեքի թիվը վորոշ սահմանից ցածր չպիտի լինի: Այդպիսի կոլխոզներում

բոնիֆիկատորի ստացած աշխատերը ավելի պակաս չպետք է լինեն, քան ընկնում ե միջին թվով ամեն մի կոլխոզնիկի, ամբողջ տարվա համար: Դա պիտի լինի նրա նվազագույն վարձատրությունը:

Միայն բացառիկ գեպքերում, յերբ կոլխոզը շատ փոքր ե նա կարող ե համաձայնության գալ հարևան, նույնակեն վոչ խոստը կոլխոզի հետ, վորպեսզի յերկուսը միատեղ պահեն մի բոնիֆիկատոր, տալով նրան լրիվ թվով աշխորեք կամ մասամբ աշխատավարձ: Բայց դա կարելի յէ անել այնտեղ, վորտեղ կոլխոզները գտնվում են համեմատաբար բարենպաստ պայմաններում, քիչ ճահիճներ ունեն և այն:

Ընդհակառակը, յերբ կոլխոզը մեծ ե, բոնիֆիկատորը պետք ե ստանա ավելի շատ, քան միջին թվով հասնում ե ամեն մի կոլխոզնիկի, վորովհետև այդ ժամանակ նա պիտի կատարի բարգական լրպած և յերկար ժամանակ պահանջող աշխատանք:

Թեև գժվար ե բոլոր պայմանների համար նշել միենույն թիվը, բայց և այնպես զտնում ենք, վոր ծանրաբենվածություն ունեցող բոնիֆիկատորը ամսվա ընթացքում պետք ե ստանա վոչ պահան քան 20 աշխոր, և այդ վարձատրությունը նա պիտի ունենա տարվա ըոլոր 12 ամիսների համար:

Յերեմն կոլխոզների վարչությունները համաձայնվում են բոնիֆիկատոր պահել միայն ամառվա ամիսներին: Դրա պատճառն այն է, վոր բժիշկները չեն կարողացել մանրամասն ու թիվ կերպով բացատրել նրանց բոնիֆիկատորների անելիքները: Վոմանք կարծում են, վոր բոնիֆիկատորը միայն խինին բաժանելու համար ե, յերբ նա բժշկի հրահանգով դեղեր և բաժանում, նրան տալիս են աշխոր, իսկ յերբ այդ գործը վերջանում ե, զարդարում են աշխորեք տալուց:

Դա խոշոր սխալ ե, վորը թյուրիմացության արդյունք պիտի համարել: Վորպեսզի պարզ լինի բոնիֆիկատորի ամենալիքները, նրա գերը մալարիայի դեմ պահպարի գործում, մենք կթվենք նրա պարտականությունների ամենագլխավոր կետերը:

Դրանք հետևյալներն են:

Մշտական հսկողություն ունենալ ջրերի և առավելապես վոռողող առուների ցանցի վրա և հետևել վոր չառաջանան այնպիսի ջրականգեր և ճահճացումներ, վորոնց մեջ կարողանա բռն դնել ու բազմանալ մալարիա տարածող մոծակը՝ անոփելիսը: Այդ հսկողությունը բոնիֆիկատորն իրագործում ե վոչ

միայն գյուղի մեջ յեղած, այլ և նրա շրջապատում գտնվող բուլոր առուների և այլ ջրերի նկատմամբ, վորոնք հաշված գյուղի ծայրամասերից Յ կիլոմետրից հեռու չեն:

Ճահճացումներ և այլ ջրականդեր հայտաբերելու գեպքում, հետազոտել նրանց և պարզել, թե վարակված են արդյոք նրանք մոծակի թրթուրներով ու հարսնյակներով: Հաշվի առնել բոլոր ճահճացումները, հետազոյում նրանց վերաբերյալ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար, նշելով, թե ինչ պատճառներից ե առաջացել ճահճացումը, ջրականդը:

Ճահճացումներում կամ ջրականդերում մոծակի հասունացած թրթուրներ ու հարսնյակներ գտնելու գեպքում առանց հետաձեկութ միջոցներ ձեռք առնել նրանց լիովին վոչնչացնելու համար, այսինքն փոշիացնել փարփառյան կանաչի խառնուրդ կամ սրոկել նավթ, նրա մեջ թողնել գամբուզյա ձկնիկներ, աղատել բույսերից, մաքրել ցախակեռով և այլն, մի խոսքով զործադրել այն միջոցը, վորն ավելի նպատակահարմար և տվյալ պայմաններում:

Յեթե հետազոտության ժամանակ հայտաբերված են նոր արհեստական ճահճացումներ, աշխատել անմիջապես վերացնել նրանց առաջանալու պատճառը, վորպեսզի ճահճացումը վոչնչանա: Որինակ, յեթե ջրականդ ե գոյացել առվի պատոված ափից ջուր հոսելու պատճառով, ամրացնել պատոված տեղը: Յերբ ճահճացման պատճառը վերացնելու համար ավելի մեծ աշխատանք և պահանջվում, պարզել մեղավոր անձի անուն ազգանունը և հայտնել գյուղխորհրդի նախագահին, վորպեսզի նա առաջարի ճահճացումն առաջացնողին նշանակած ժամկետի ընթացքում վերացնել ճահճացման պատճառը և չորացնել ճահճացումը: Յեթե գյուղխորհրդի նախագահը անուշագրության և մատնում բոնիֆիկատորի հայտաբարությունը, բոնիֆիկատորը պարտավոր ե հայտնել այդ մասին արութիմնարկի վարիչին, շրջանի սանիտարական բժշկին կամ առբաժնի վարիչին:

Իհարկե, նախ քան բողոքելը բոնիֆիկատորը պետք ե աշխատի համոզել ճահճացումը՝ առաջացնողին ուղղել իր սխալը և վերացնել ճահճացումը: Սակայն բոնիֆիկատորը իրավունք չունի վորեե կարգադրություններ անել կամ տուժի յենթարկել. առողջապահական մարմիններից՝ այդ իրավունքը տրվում է միայն պետական սանիտարական տեսուչներին և արողկայանների վարիչներին:

Յերբ վորեւ մեկը յերկրորդ անգամ խախտում ե յեղած վորոշումները և ճահճացումներ առաջացնում, բոնիֆիկատորը պարտավոր ե այդ մասին հայտնել գյուղխորհրդին և արողկայանների վարիչին, մեղավորին որինական պատասխանավության յենթարկելու համար:

Տրոպիկական կայանի կամ դիսպանսերի բժշկի առաջարկությամբ կատարել մանր հիդրոտեխնիկական, այսինքն ճահճացումների չորացման աշխատանքները:

Մշտական հսկողություն ունենալ մոծակների նկատմամբ, սիստեմատիկորեն հետազոտել գոմերը և մոծակների թագնվելու համար մյուս հարմար շենքերը, ամեն անգամ հաշվի առնելով հայտաբերված մոծակների քանակությունը: Յեթե շենքերում և այլ կետերում նկատված ե մոծակների բանակի ավելացում կամ նրանց կուտակումը, բոնիֆիկատորը պարտավոր ե կատարել ծխում կամ այլ միջոցով վոչնչացնել մոծակներին: Այդպես պիտի անի նա ամառվա ամիսներին անընդհատ, իսկ ցրտերն սկսվելիս՝ նոյեմբերին, նա պարտավոր ե վոչնչացնել մոծակներին թե կոլխոզի և թե ամեն մի կոլխոզնիկի գոմում, զրա համար ստանալով գյուղխորհրդի աջակցությունը: Նույն աշխատանքը նա պիտի կատարի նաև գարնան տաք յեղանակներն սկսվելուց առաջ, այսինքն մարտի սկզբից, կամ յեթե գեռ ցուրտ ե, մի քիչ ուշ:

Տաք յեղանակներն սկսվելուց հետո կազմակերպել կոլխոզնիկներին ծածկոցներ (պոլոզներ) մատակարարելու գործը. միշտ հետեւ, վոր ծածկոցներ ձեռք բերողները գործ ածեն այն և ոգուվեն նրանից այնպես, ինչպես պահանջվում է:

Ակտիվ մասնակցել բժիշկների կողմից բնակչության մասսայական հետազոտման աշխատանքներին, վորոնք կարող են տարվել տարվա բոլոր ամիսներին բայց ավելի լայնորեն՝ ձմեռվա ընթացքում:

Բժիշկների ցուցումներով և նրանց գեկավարությամբ ու հսկողությամբ անցկացնել հիվանդ կոլխոզնիկների բուժումն առանց կարելու նրանց աշխատանքից, այսինքն բժշկի աված ցուցակի համաձայն խինին կամ ակրիսինին բաժանել աներում, դաշտում և այլն: Այդ աշխատանքը ես կարող ե կատարվել տարվա ամիսներին, բայց ավելի ուժեղ և լայն տարվում ե գարնան սկզբին: Իհարկե, բոնիֆիկատորը չի կարող փօխարինել բժշկին, նա չի կարող վորոշել հիվանդ և տվյալ անձը թե վոչնետեալ պետական սանիտարական տեսուչներին և արողկայանների վարիչներին:

թյունն և միայն դեղ բաժանել այն մարդկանց և այնքան ժամանակ, ինչպես հրահանգել և նրան բժիշկը:

Յեթե տվյալ կոլխոզում բժշկն անհրաժեշտ և զաել նախորդ գեղեց բաժանել մալարիայից պաշտպանվելու համար — կամ ինչպես ասում են, անցկացնել պրոֆիլակտիկ խինիզացիա կամ ակրիսինիզացիա — այդ բաժանումը կատարել բայց բժշկի տված ցուցակի: Այսուղեւ բոնիֆիկատորը միմիայն կատարում և բժշկի հրահանգները և ցուցումները և իրավագործ չե վոչ փոփոխել ցուցակները — հանել կամ ավելացնել նոր մարդկանց, վոչ եւ յերկարացնել կամ կարճացնել զեղ բաժանելու ժամանակը, ձեր և այլն:

Յեթե կոլխոզի նախագահը, կամ առհասարակ վորեն կոլխոզ՝ նիկ առաջարկություն ունի բուժական կամ պրոֆիլակտիկ նպատակներով արվազ գեղորացիքի բաժանման ձեի, քանակի դեմ և այլն, նրանք այդ առթիվ պետք եւ դիմեն բժշկին:

Կոլխոզնիկների մեջ տանել բացատրական աշխատանք մալարիայի դեմ պայքարելու հարցերի շուրջը. այդ նպատակով բոնիֆիկատորը պետք եւ կազմակերպի խրճիթ — ընթերցարանում կամ, յե թե կա, ակումբում մի անկյուն, վորտեղ միշտ ունենա թրթուրներ, հարսնյակներ, տարբեր տեսակի սոծակներ, մալարիայի դեմ պայքարի համապատասխան նկարներ, գործիքներ, մալարիայի մասին հանրամատչելի գրականություն և այլն: Որքա վորոշ ժամերին նա պետք եւ զանվի այլտեղ և բացատրություն տա այն կոլխոզնիկներին, վորոնք հետաքրքրվում են այդ հարցերով: Մինույն ժամանակ նա ինքը պիտի հետաքրքրի նրանց այդ հարցերով և բերի յուր անկյունը մալարիայի խնդիրներին ավելի մոտ ժանոթացնելու համար:

Բոնիֆիկատորի անկյունում ամառվա ընթացքում միշտ պիտի լինեն կենդանի մոծակներ ու թթուրներ, հարսնյակներ, իսկ ձըմունը՝ չորացրած կամ սպիրոնի մեջ պահած նմուշները:

Հետեւ զյուղի սանիտարական դրությանը վորը նշանակություն ունի մի շարք այլ հիվանդությունների տարածման համար (ձիճային հիվանդություններ, լուծեր և ուրիշները), ակտիվ ոգնել զյուղի սանիտարական սեկցիային նրա աշխատանքների ընթացքում, մասնավորապես զյուղը աղբից ազատ պահելու, արտաքնօցներ կառուցելու և մաքուր պահելու տեսակետից և այլն:

Յեթե զյուղը սահմանամերձ է, առանձին ու շաղբություն դարձնել սահմանապահ զորամասերի շենքերի շուրջը մոծակների և նրանց թթուրների դեմ պայքարելու վրա: Այդ բոլոր աշխատանքները բոնիֆիկատորը պետք եւ կատարի արուպհիմնարկի բժշկի զեկավարությամբ, վորին նա յենթաքրվում եւ անմիջապես: Եա անշեղորեն պիտի կատարի բժշկի բոլոր կարգադրությունները: Միենաւ ժամանակ նա տեղյակ պիտի պահի կոլխոզի նախագահին իր անելիքների, ինչպես և արդեն կատարած աշխատանքների մասին: Յեթեք չորս ամիսը մեկ անգամ նա պետք եւ զեկուցի կոլխոզի վարչության նիստերում, ինչպես և կոլխոզնիկների ընդհանուր ժողովներում յուր կատարած աշխատանքների մասին:

Բոնիֆիկատորը պարտավոր եւ ունենալ որագիր (կազմաձևառ տետրակից), և ամեն որ նրա մեջ զըի մանրամասնութեն յուր տաքած հետադուռքությունների արզյունքները, ինչպես և իրագործած միջոցառումները: Այդ բոլորը նա պետք եւ լրացնի թվերով, վորոնք բնորոշում են աշխատանքի քանակը և վորակը:

Որպիս հարկավոր եւ թե մալարիայի ընթացքի մասին ճիշտ պատկերացում ունենալու և թե բոնիֆիկատորի աշխատանքի բնույթը, նրա արզյունքները, ինչպես և ծանրաբեռնվածությունը պարզեցնելու համար:

Բոնիֆիկատորը պարբերաբար պետք եւ ներկայան զեկավար արուպհիմնարկի բժշկին, զեկուցի աշխատանքների ընթացքի, յեղած թերությունների և խոշնողուների մասին և ստանալրացուցիչ ցուցմունքներ: Յեթե արուպհիմնարկը հեռու յեւ և համարվոր չե հաճախ ներկայանալ, բոնիֆիկատորը պարտավոր եւ այդ բոլորի մասին գրավոր գեկուցազրեր ուղարկել:

Այսպիսով տեսնում ենք, վոր բոնիֆիկատորի աշխատանքները բավական բազմակողմանի յեն, նա շատ զործ ունի անելութեա ամուսնը և թե ձմռանը:

Յեթե բոնիֆիկատորը աշխատում եւ բարեխղճորեն և յեթե զյուղիսորուրը և կոլխոզի վարչությունը յուրց են տալիս նրան անհրաժեշտ ոգնությունը, իսկ արուպհիմնարկը զեկավարություն, ապա շատ կարճ ժամանակից զյուղի մալարիային զրությունը զդալի չափութիւն: Առաջին հերթին գա պիտի արտահայտվի մոծակների թվի խիստ պակասելով, նույնիսկ նրանց անհետացումով: մենք շատ և շատ զյուղեր ունենք, վորակը մի բարեխղճ և աշխատանքը բոնիֆիկատոր կարողա-

Նում և գյուղը բոլորքին ազատ պահել մոծակներից: Այդ դործը քիչ դժվարանում և միայն այն գյուղերի նկատմամբ, վորոնք ամբողջովին շրջապատված են ճահիճներով կամ զանգում են անմիջապես սահմանի վրա և զրա հետևանքով մոծակներ են ստանում թուրքիայից կամ իրանից, վորտեղ մալաբիայի գեմ բոլորովին պայքար չի տարվում: Բայց այսպիսի գյուղերում ել բոնիֆիկատորի լավորակ աշխատանքը մեծ աղբեցություն կզործի մալաբիայի տարածումը խիստ կրծատելու վրա:

Ասածներից պարզ պետք են լինի նաև այն, վոր բոնիֆիկատորը պիտի լավ գրագետ լինի: Անգրագետ կամ կիսազրագետ մարդուն հնարավոր չեն հանձնարարել այնպիսի գործ, ինչպիսին և գեղորայք բաժանելը, սահմանարական լուսավորությամբ զբաղվելը, որագիր կազմելը և այլն:

ԿՈԼԽՈԶԻ ՀԱԿԱՄԱԼՈՒՐԻ ՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԸ

Կոլխոզում տարվող հակամալարիային աշխատանքների հաջողությունը գգալի չափով կախված է նրանից, թե ինչպես և կազմված պլանը, վորքան լրիվ և նա ընդունելու միջոցառումները:

Պլանի մեջ, վորն իհարկե, կազմվում և տրութիկական հիմնարկի, իսկ նրա բացակայության դեպքում սանիտարական բժըշկի մասնակցությամբ, առաջին հերթին ոլեադ և նշված լինեն տարվելիք հիդրոտեխնիկական, ճահիճների չորացման աշխատանքները:

Բնակավայրը լիովին ազատված կլինի մալաբիայի տարածման վահանգից միայն այն գեպքում, յերբ կատարելապես վերացվեն բոլոր ճահիճներն ու վնասակար ջրականդերը թե բնակավայրի մեջ և թե նրա շրջապատում 3 կիլոմետր շառավիղով: Միևնույն ժամանակ պետք են վերացված լինեն նոր ճահճացումներ առաջանալու հնարավորություններն ու պատճառները:

Բայց այդ միջոցառումները վոչ բոլոր գյուղերի կամ ավանների նկատմամբ կարելի յեն միանգամբ կիրառել: Կան բնակավայրեր, վորոնք շրջապատված են ճահիճներով (Բագալ և Ղուրի Արագ Հոկտեմբերյանի շրջանում և ուրիշները): Նրանց վերացման համար հարկավոր են թե մեծ զումարներ և թե յերկար ժամանակ: Այդպիսի մեծ աշխատանքները կարող են և պետք են առաջանալ (Դործկոմ) կամ կենտրոնական հիմնարկու-

թյունները (Հողժողկոմատ, Զրային վարչություն, Առժողկոմատ): Նման աշխատանքների մեջ կոլխոզը կարող է միայն զանազան տեսակի ոժանդակություն ցուց տալ, որինակ բանվորական ուժով, վորիսազրական միջոցներով և այլն:

Բայց մալաբիայով վարակված գյուղերի մեծ մասն իրենց սահմաններին ամբիջապես մտ մեծ ճահճացումներ չունեն: Այդովսի գյուղերի առողջացման խնդիրը մեծ զումարների հետ չի կապված և ուրեմն հեշտությամբ կարող ե լուծվել կոլխոզի ուժերով, մասնավանդ հիմա, յերբ կոլխոզներն արդեն ունեոր են դարձել և հնարավորություններ ունեն մեծ ուշադրություն դարձնելու գյուղի բարեկարգման հարցերին:

Յեթե նույնիսկ առանձին գեպքերում ճահիճները չորացնելու համար հարկավոր ե ավելի աշխատանք ու միջոցներ, քան կարող ե հատկացնել ավյալ կոլխոզը մեկ տարում, ապա նրան կարելի յեն բաժանել մասերի և իրականացնել 2 կամ 3 տարվա ընթացքում: Ուրեմն ամեն անդամ յենելով կոլխոզի ունակությունից պլանի մեջ պետք ե մտցնել աշխատանքների ծրագրի այն մասը, վորը հնարավոր ե կատարել: Գետք և հիշել միայն, վոր ինչքան կարծ ժամանակում կատարվեն չորացման բոլոր աշխատանքները, այնքան շուտ կազմակի գյուղը, կոլխոզը, մալաբիայի չարիքներից:

Կոլխոզի պլանի մեջ պետք ե նշված լինի նաև տարվա այն ժամանակը, յերբ կատարվելու յեն աշխատանքները: Բոլոր կոլխոզները չեն կարող այդ անել նույն ամիսներին: Դա կախված է նրանից, թե կոլխոզում վոր ամիսներին համեմատաբար ավելի շատ են լինում աշխատող պատա ձեռքեր, իսկ դա բգիտում է կոլխոզի տնտեսության բնույթից: Որինակ, բամբակացան կոլխոզներում հազիվ թե հնարավոր լինի ճահիճների չորացման աշխատանքներով զրագվել ունակմբեր — հոկտեմբեր ամիսներին, յերբ բոլորն զրագված են բամբակ հավաքելով:

Ամեն մի կոլխոզի վարչություն, յենելով յուր կոնկրետ պայմաններից, ինչը պիտի վորաշի չորացման աշխատանքները կատարելու ժամանակը և մտցնի այդ պլանի մեջ:

Բայց միայն ճահիճները չորացնելը դեռ լիովին չի լուծում խնդիրը: Յերկար տարիների մեր փորձը ցույց է տալիս, վոր բավական չեն միմիայն չորացնել ճահիճը, անհրաժեշտ է զրանից հետո անպայման ողտագործել չորացրած տարածությունը: Յեթե այդ չի արվում, ճահիճը շատ ցուտով նորից վերականգնվում է:

Ուստի կոլխոզի վարչությունը պետք է մտածի նաև այն մասին, թե ինչպես պիտի ողբազործի շորացրած ճահճի տեղը, ինչ բույս պիտի ցանվի այնտեղ և այլն

Քանի վոր արհեստական ճահճացումները շատ հաճախ կապված են լինում վառողման ցանցի անկանոն ողբազործելու ու խնամելու հետ, կոլխոզի վարչությունը առանձին ուշադրություն պիտի դարձնի այդ հարցի վրա: Կոլխոզի պլանում պետք է նըշված լինի առուների մաքրման ժամանակը: Մաքրումը պետք է կատարվի այնքան հաճախ, վորքան այդ պահանջվում է տվյալ պայմաններում: Առուներ կան, վորոնց բավական ե տարեկան մեկ անգամ լավ մաքրել և զրանից հետո նրանք ամբողջ տարին կանոնավոր կորործին: Բայց պատահում են և այնպիսիները, վորոնք կաբիք ունեն տարբա ընթացքում յերկու կամ յերեք անգամ մաքրելու: Դա կախված է ջրի և հողի հատկություններից և մի շարք պատահական կամ մշտական պայմաններից: Այդպիսի առուները լավ ծանոթ են կոլխոզի վարչությանը, և նա պիտի նախատեսի նրանց կրկնակի մաքրման ժամկետները:

Իմիջի այլոց, առուների մաքրման ժամանակ հաճախ նկատվում է մի խոշոր թերություն. մաքրողներն առվից չեն հանում ամբողջ կրտսեակված ավազն ու տիգմը, իսկ հանածը դուրս չեն զցում առվից, այլ կացնում են առվի ներսի պատերին: Դրանից վոչ մի ողուտ չի կարող լինել, վորովնեան պատին կողը հողը չորանալուց նորից թափվում է առվի մեջ և վերականգնում նախին զրությունը: Պետք է լավ հսկել, վոր այդպիսի թերություն չթույլարքի և բացի այդ, մաքրելիս առվի ափերը աղատվեն մասն բույսերից:

Քանի վոր մալարիայի դեմ պայքարը տեվական դործ է, քանի վոր վոչ բոլոր գեպերում ե հնարավոր միանգամից առողջացնել գուղը և նրա շրջակայքը, ուստի վերեւում թված կետերից բացի, կոլխոզի վարչությունը պետք է մասնակցի նաև մի շարք այլ հակամալարիային աշխատանքների, վորոնց անմիջական կատարողը բոնիֆիկատորն է հանդիսանում: Յեթե չլինի կոլխոզի վարչության և մասնավորապես նրա նախազա՞ի անմիջական և ամենորյա մասնակցությունն ու աջակցությունը, նույնիսկ ամենալավ բոնիֆիկատորը շատ քիչ բան կարող է անել: Նույն ոժանդակությունը պետք է ցույց տրվի նաև կոլխոզին կցված տրոպհիմնարկի բժշկին և մյուս բուժաշխատող-

ներին: Բժշկի և բոնիֆիկատորի ձեռնաբակած աշխատանքների հաջությունը մեծ չափով կախված է այդ ողնությունից:

Վերցնենք հենց կոլխոզնիկների հետազոտության խնդիրը, վորն անհրաժեշտ է նրանց մեջ բուժում անցկացնելու համար: Յերբ բժշկը զալիս է լույսով և հրավիրում կոլխոզնիկներին՝ նրանց քննելու համար, հաճախ զալիս են նրա մոտ միայն ակընհայտ հիվանդները, մինչդեռ տվյալ մոմենտին իրենց առողջ գաղցողների մեջ ել բավական թվով մարդիկ են լինում, զորոնք մալարիայով վարակված են, բայց գեռ չեն գողացնում: Այդպիսիները վատանգավոր են վոչ միայն իրենց, այլ և մյուսների համար նրանցից մոծակը կարող է հիվանդությունը տարածել առողջներին:

Յերբ կոլխոզի նախագահը, ինչպես և զյուղխորհրդի նախագահը, ողնում են բժշկին բացատրելու հետազոտության իմաստն ու նպատակը, կարծ ժամանակում քննության են յենթարկվում բոլոր կոլխոզնիկներն ու նրանց յերեխաները: Իսկ զրանից շահում են բոլորը: Հայտարերգում և բուժում են բոլոր հիվանդները և հետազոյւմ նրանք ավելի քիչ գեպերում են կրկին հիվանդանում, աշխատանքային քիչ որեր են կորցնում:

Նույնը պիտի ասել հենց մասսայական բուժումը կազմակերպելու մասին: Կոլխոզնիկների մեջ գեռ պատահում են այնպիսիները, վորոնք վոչ լրիվ զիտակցելով բուժման նշանակությունը, կամ բոլորովին խուսափում են բժշկվելուց կամ թե բուժումը շարունակում են այնքան ժամանակ, վորքան տեսում են նրանց զողերայքը, Դա ձիշտ չի: Կանոնավոր և բժշկի նշանակած տեղողությամբ պետք է բուժի ամեն մեկը, ում մոտ գտնված են մալարիայի նշաններ: Կոլխոզի նախագահը, ինչպես և զյուղխորհրդի նախագահը, կուսկաղմակերպության զեկավարը պետք է աղղեն բուժումից խուսափողների վրա և համոզեն նրանց անցկացնել բուժման լրիվ կուրսը: Դա առավելապես հեշտ է անել այն գլուղերում, կոլխոզներում, վորաեղ բուժումը կազմակերպվում է այնպես, վոր վոչ թե հիվանդն ե զնում բժշկի կամ բուժակի, բոնիֆիկատորի մոտ դեղ ստանալու համար, այլ հատուկ մարդկի՝ բոնիֆիկատոր, քույր և այլն, բժշկի ցուցումով և նրա զեկավարությամբ դեղը բերում է բաժանում են դաշտում, տանը, դպրոցում և այլն:

Ինչպես տեսանք սկզբում, մալարիայից պաշտպանվելու զործում շատ մեծ դեր է կատարում ծածկոց (պոլոզ, մրչակդամ) զործածելը: Մեզ մոտ համարյա տասը տարի յե, ինչ մալարիայոտ

գյուղերում անընդհատ ծածկոցներ են բաժանվում, բայց չնայած դրան այդ գյուղերի բնակչության միայն չնշին տոկոսն է ապահոված ծածկոցներով: Բացառություն են կազմում միայն մի քանի գյուղեր (Արփա, Մելրի), վորոնք ծածկոցներով լրիվ ապահոված են և իրենք ել զգում են նրանց դրական գերը: Մյուս գյուղերը պակաս չափով ծածկոցներ չեն ստացել, բայց այդպիսիները չեն խնամել կամ զործ են ածել այլ նպատակների համար: Գյուղի կոլխոզի ղեկավարների պարտականություններից մեկը պիտի լինի հսկել, վոր կոլխոզիկները գնեն այդ ծածկոցները և, վոր ամենազլիսավորն է, ամբողջ ամառվա ընթացքում կանոնավոր գործածեն:

Դիտավորյալ կերպով ծածկոցները փչացնողների, ուրիշ կարիքների համար գործածողների դեմ հարկավոր և գործադրել բարոյական ներգործման տարբեր միջացներ՝ ընդհանուր ժողովներում, պատի թերթում և այլն:

Կոլխոզի վարչության և առանձնապես նրա նախագահի ստանդակության մեծ կարիք ունի կոլխոզի բոնիֆիկատորը: Ինչպես վերևում շեշտեցինք, բոնիֆիկատորը պետք է միշտ տեղյակ պահի կոլխոզի նախագահին յուր աշխատանքների ընթացքում հայտարկրած թերությունների մասին: Իսկ նախագահը պետք է ուշադիր լինի դեպի բոնիֆիկատորի տվյալները և համապատասխան կարգադրություն անի: Որինակ, յեթե դաշտերը ջրող անձանց մեջ կան այնպիսիները, վորոնք անուշադիր են վերաբեր վում դեպի իրենց պարտականությունները և հաճախ արհեստական ճահճացումներ են առաջանում, կոլխոզի նախագահը պետք է ձգտի ուղղել տալ նրանց թույլ տված սխալները, իսկ այդպիսիների կրկնվելու դեպքում՝ յինթարկի տույժի կամ նրանց փոխարինի ավելի բարեխիզմ և գիտակից մարդկանցով:

Շատ տեղերում կոլխոզի բոլոր դաշտերը մի տեղ չեն կենտրոնացած, այլ ցըլած են, յերբեմն բավական հեռու մեկը յուսից: Յեթե բոնիֆիկատորին հարկավոր ե շրջել այդ դաշտերը դեղ բաժանելու կամ հետազոտություններ կատարելու, թթուրներին վոչնչացնելու համար, նա ստիպված է լինում ամեն որ անցնել շատ յերկար ճանապարհ, նրա ժամանակի մեծ մասը ծախսվում է տեղից տեղ գնալու համար, իսկ իսկական աշխատանքի համար քիչ ժամանակ է մնում: Այդ գետքերում նրա աշխատանքը ավելի արդյունավետ գարձնելու համար կոլխոզի նախագահը պետք է ապահովի նրան փոխադրական միջոցներով:

Քանի վոր այժմ համարյա բոլոր գյուղերը լավ ճանապարհներ ունեն, ուստի ամենանպատակահարմաքն ե բոնիֆիկատորին հեծանիվ տալ:

Բացի այդ, նպատակահարմաք և նույնիսկ անհրաժեշտ է կոլխոզի հաշվին կոշիկ և արտհազուստ տալ բոնիֆիկատորին, վորովհետեւ ճահճացումներում աշխատելուց, ինչպես և նավթի ու թունավոր միջոցների հետ զործ ունենալուց նախ շատ շուտ են փչանում նրա կոշիկներն ու հազուստը և յերկրորդ՝ թույնը կարող է մնալ նրա հազուստի վրա և փսակել նրան: Այդ արտհազուստը բոնիֆիկատորը պիտի զործ ածի միայն աշխատանքի ժամանակ:

Այժմ մեր կոլխոզներում շատ ուժեղ շինարարություն է տարվում: մեր աչքի առաջ գյուղն արագորեն փոխել և յուր կերպարանքը: Նախկին կիսագետնափոր, վատառողջ, հաճախ գոմերի հետ միացած ու լուսամուտներից զուրկ խրճիթների փոխարեն, այժմ կառուցվել և կառուցվում են գեղեցիկ, լավ արտաքինով, լուսամուտներով ու մյուս հարմարություններով ոժտված տները: Ուժեղ զարգանում է նաև զոմաշինարարությունը թե կոլխոզի և թե առանձին կոլխոզնիկների անսառնների համար: Սակայն այդ շինարարության ընթացքում շատ անդամ չեն կատարվում այն պահանջները, զորոնք անհրաժեշտ են մալարիայից ապահովելու կամ պաշտպանվելու համար:

Այստեղ մենք կնշենք մի քանի պահանջներ, վորոնք կարող են շատ մեծ նշանակություն ունենալ առողջ զյուղ ստեղծելու համար:

Յերբ գյուղը նոր և կառուցվում կամ հարց է ծագում այն տեղափոխելու մասին, մալարիայի տեսակետից խոշոր նշանակություն ունի բնակավայրի տեղի ընտրությունը: Վորպես որենք նոր բնակավայրի համար պետք է ընտրել այնպիսի հողամաս, վորը բացի սանհիտարարական մյուս պահանջներից, բավարարի նաև հետեյալին — առնվազն 3 կիլոմետր հեռու լինի բնական կամ խոշոր արհեստական ճահճացումներից:

Այն գետքերում, յերբ այդ միանգամայն անհնարին է անել, հարկավոր և նախ և առաջ մալարիայի տեսակետից առողջացնել ընտրած հողամասը և նրա շրջակայքը 3 կիլոմետր շառավիղով (այսինքն չորացնել ճահճացումները) և ապա հետո սկսել շինարարությունը: Այդ հիմնական պահանջը շատ հաճախ անտես է արվում, և զրա հետեւանքը շատ զուտ գգում են բոլորը, յերբ առաջ և զալիս մալարիայի եպիգեմիա:

Յեթե նոր շինարարությունը տարվում է արդեն զոյսլթյուն
ունեցող բնակավայրում, առանձին ուշադրություն՝ պիտի դարձ-
նել հետեւյալ յերկու հարցերի վրա: 1. շինարարության համար
նյութ (հող, ավագ, քար) վերցնելուց անհրաժեշտ և խուսափել
նոր ճահճացումներ առաջացնելուց, իսկ յեթե արդեն զոյցել էն՝
վերացնել, լցնել: 2. նոր տները (բնակելի շենքերը) հարկավոր և
կառուցել բնակավայրի այն մասում, վորո ավելի հեռու յե գորն-
վում շրջակայքում յեղած ճահճներից, իսկ զոմերը (մանավանդ
կոլխոզի մեծ գոմերը) պետք է կառուցել այնպես, վոր նրանք
գտնվեն բնակելի շենքերի և ճահճների միջև: Դրա նպատակն
այն է, վոր ճահճում զոյցող մոծակներն արյուն փնտռելուս
առաջին հերթին հանդիպեն կենդանիներին և ծեն նրանց արյունը
և չհասնեն մարդու բնակարանը: Մարդու մալարիայով կենդանի-
ները չեն վարակվում, իսկ կենդանու մալարիայի նման հիվանդու-
թյունները մեզ մոտ տարածում են վոչ թե մոծակները, այլ
տիգերը: Ուրեմն մոծակների կծելուց կենդանիները կտուժեն
այնքան, վորքան այդ խանդարում և նրանց հանդիսալը: Յերկու
չարքից համեմատարար ավելի փոքր է յերկրորդը, այսինքն
ավելի քիչ չարքի և, յերբ մոծակները անհանդատացնում են կեն-
դանիներին, քան յերբ և անհանդատացնում և՛ մալարիայով
վարակում են մարդկանց: Իհարկե, ավելի լավ կլինի, վոր չտու-
ժեն թե մարդիկ և թե կենդանիները, իսկ դրա համար հարկավոր
է, վորքան հնարավոր է, շուտ վերացնել ճահճը, կամ համենայն
դեպք, կանոնավոր աղատել նրան թրթուրներից ու հարսնյակ-
ներից:

Վերը գրվածով միայն չի սահմանափակվում, իհարկե, այն
ամենը, ինչ հարկավոր է անել կոլխոզին, մալարիայի դեմ պայ-
քարի ուղղությամբ: Մենք նշեցինք միայն զլխափոր խնդիրները,
չցանկանալով ծանրաբեռնել ընթերցողին ավելի փոքր, թեև խոշոր
նշանակություն ունեցող հարցերով:

Մենք համոզված ենք, վոր յեթե մեր կոլխոզնիները և կոլ-
խոզների վարչությունները յուրացնեն զրբուշկում տրված տեղե-
կությունները և, կիրառեն գրանք առորյա կյանքում, դա
արդեն խոշոր բեկում կառաջացնի մալարիան շուտափույթ հաղթա-
հարելու գործում:

Մալարիան, աշխատավորության այդ կատաղի թշնամին,
անհամատեղելի յե սոցիալիստական հաստրակարգի հետ: Նա պետք
է անպայման վերացվի, և ինչքան շուտ կատարվի այդ, այնքան

շատ կշահի գրանից մեր աշխատավորությունը և վողջ պետու-
թյունը:

Մալարիան տարածված է յերկրագնդի շատ յերկրներում:
Հնդկաստանում, որինակ, ամեն տարի մալարիայով հիվանդանում
են 100-ից մինչև 200 միլիոն մարդ և մահանում մոտ 2 միլիոն:

Մի շարք գիտնականների տվյալներով մալարիայով տառա-
պում է յերկրագնդի բնակչության վոչ պակաս քան մեկ յերրորդ
մասը — 650 միլիոնից մինչև 800 միլիոն մարդ:

Մակայն այդ գեռ չի նշանակում, վոր մալարիան մի ան-
խուսափելի չարքի և: Նույնիսկ մի քանի կապիտալիստական
յերկրներում, վորտեղ մալարիան վասառ եր նաև ունեոր տար-
րերին, նրա գեմ ձեռք են բերվել հաջողություններ: Յեթե այդ
հնարավոր է կապիտալիստական իրավակարգում, ապա անկասկա-
ծորեն և առավելապես գա հնարավոր ու անհրաժեշտ և մեր յերկ-
րի, խորհրդային իրավակարգի համար, ուր ամեն ինչ արգում է
աշխատավորության համար, վորտեղ աշխատավորությունն
ինքն և ամեն ինչի տերն ու տնօրենը:

ԽՍՀՄ-ում, մենք ունենք անհամեմատ խոշոր հաջողու-
թյուններ մալարիայի դեմ պայքարի ֆրոնտում: Հենց միայն մեր
հանրապետությունում համեմատել անգամ չի կարելի մալարիայի
դրությունն այժմ և, որինակ, դաշնակների տիրապետության ժամա-
նակ: Հիմա մեզ մոտ մալարիայի պատճառով մահացության գեղքերը
շատ հազվադյուր յերևույթ են, մինչդեռ 1918-20 թվական մալարի-
այից մահանում ելին հարյուրավոր ու հազարավոր աշխատավորներ: Մալարիայի պիերումները այն ժամանակ այնքան ծանր ելին, վոր
1919 թ. նոյեմբերին միայն այդ հիվանդությունից մահացան 2 բժիշկ:

Խորհրդային իշխանությունը միայն հայաստանում մալա-
րիայի դեմ պայքարելու համար ծախսում և տարեկան 2-ից և մի-
լիոն սուրբի: Տարեց տարի այդ գումարները ավելի մեծանում են և
դրա հետ միասին պակասում և մալարիայի տարածումը, նրա պատ-
ճառած վասառները: Մենք ունենք շրջաններ ու բնակավայրեր,
վորոնց կերպարանքը հիմնովին փոխվել ե, վորտեղ մալարիան
դարձել և հազվադյուր հիվանդություններից մելք, մինչդեռ խոր-
հրդայնացումից առաջ մալարիան շնչել չեր տալիս այդտեղի աշ-
խատավորությանը:

Մեզ մոտ մալարիայի դեմ պայքարը տարվում է սիստե-
մատիկորեն և պլանային կարգով, իսկ կապիտալիստական յեր-
կրներում մալարիայի մասին սկսում են մտածել այն ժամանակ,

յերբ նրա զոհերի թիվը հազարների ու տասնյակ հազարների յե
հասնում: Որինակ, Ցելլոն կղզում 1934-35թ.թ. յոթ ամսվա ըն-
թացքում 100.000 մարդ մահանալուց հետո միայն պետությունը
ծախսեց մի քանի միլիոն ռուբլի, իսկ յերբ մալարիան քիչ թու-
րացավ, նրա գեմ պայքարը նորից հանվեց ասպարեզից:

Սակայն մինչև այժմ մեր ունեցած հաջողությունները մնա-
չեն կարող բավարարել: Մեր հերթական խնդիրն ե՝ մեր սոցիա-
լիստական հայրենիքի աշխատավորությունը լիովին ազատել
մալարիայից, իսպառ վերացնել այն, վորպես հին հասարակար-
գից մնացած ժառանգություն:

Անկասկած մեր աշխատավորությունն ու նրա իշխանու-
թյունը Լենինյան-Ստալինյան հզոր Կոմունիստական կուսակցու-
թյան ղեկավարությամբ վերջնականապես կլուծեն նաև այդ խըն-
դիրները:

Յ Ա Ն Կ

Մալարիայի տարածման պատճառները	3
Դակը և նրա զարգացումը	5
Կարիա տարածող և հասարակ մոծակի տարրերությունը	7
Ի պայմաններ են հարկավոր մալարիայի տարածվելու	10
Համար	
Ի՞նչպատճեն է հասցնում մալարիան կոլխոզին ու կոլխոզնիկ	13
ներին	
Աչ պայմաններում են զարգանում մոծակները	23
Ակստական ճահճացումներ առաջնալու պատճառները	30
Մալարիայի դեմ պայքարելու միջոցները	32
Պայքար հճացումների դեմ	36
Մոծակնի թրթուրները վոչնչացնելու միջոցները	41
Մոծակնել վոչնչացնելու միջոցները	44
Մոծակնից պաշտպանվելու միջոցները	49
Պայքար մյուս միջոցները	51
Ի՞նչ սնելիքներ ունեն կոլխոզները և կոլխոզնիկները	
սարիայի դեմ պայքարելու գործում	54
Բոնիփետորը և նրա անելիքները	
Կոլխոզ հակամալարիային աշխատանքների հիմնական	
գետերը	62

Պատ. խմբագիր՝ լ. Սարդայան
Լեզվական խմբագիր՝ Ավ. Շաթիրյան
Տեխ. խմբագիր՝ լ. Ոհանյան
Սբագիրէ Մ. Սարտիկյան

30

Մոծ

Մուլ

Խէչ

Խէչ

Խ

Արհեստ

Խ

Վայքար

Մոծակներ

Մոծակները

Մոծակների

Վայքարի

Խէչ և

մալ

Բոնիֆիլ

Կոլխոզի

լ.

Գլավիտի լիազոր. Ա—3098 Հըտ. 4608.

Պատվեր 418. Տիրաժ 3000.

Թուղթ 62×94 Տպագր. 41/ մամ.

Մեկ մամ. 38,400 նշան. Հեղ. 4 մամ

Հանձնված ե արտազբության 27 ապրիլի 1938 թ.

Ստորագրված ե տպագրության համար 9 հունիսի 1938 թ.

Գետիքատի 1 տպարան, Յերևան, Լենինի փող. 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0977597

13 АВГ. 1938

410

ԳԻՒԸ 65 ԿՈՊ.

28459

//

//

Хр. Н. Пирумян
Мalaria и борьба против нее в колхозах
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.